




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Supple
Spring 1892
1892

899.962.1

S-12



899.962

5-12

Վ Ր Ա Ց
ՆՈՐԱԳՈՒՅՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

XIX 'ԻԱՐ

(ՍԵՂՄ ԱԿՆԱՐԿ)

899.962.1

5-12

ՊԵՏԶՐԱՏ

ՅԵՐԵՎԱՆ

1931

19 NOV 2011

399.962.1299

9-12

ՏԻՑԻԱՆ ՏԱԲԻՁԵ

ՎՐԱՅ ՆՈՐԱԴՈՒՅՆ
ԳՐԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆԸ
ԻՑՐԴԴԱՐ

3338

(ՍԵՂՄ ԱԿՆԱՐԿ)

Թարգման. Ա. Դուրբանյան

12/57

ՅԵՐԵՎԱՆ

1931

ՊԵՏԶՐԱՑ

13 SEP 2013

5016

74.849

Պետերստի տպարան
Գլավիտ 6884 ք)
Հրատ. № 1-79
Պատվիր 5537
Տիրաժ 1000



6580-70

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՐԱԿԱՆ ԻԴԵԱՆՆԵՐԻ ԵՎՈՒՑՈՒՑԻԱՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ
ՍԿՍԱԾ 19-ՐԴ ԴԱՐԻՑ ՄԻՆՁԵՎ ՄԵՐ ՈՐԵՐԸ

1795 թվի ջախջախումը— վերջ ֆեոդալական Վրաստանի: Կուլ-տուր-պատմական որիննտացիայի բեկումը: Ռուսական տիրապե-տություն: 19-րդ դարի սկիզբը. Ա. Ճավնավաձեյի պոեզիան—առ-մանտիկ դպրոցի նախերգանքը Վրաստանում, 1832 թվի վոդյեբայրոնական ազգային ազատամբությունների և գեկարյզմի ար-ձագանք վրաց. կյանքում և գրականության մեջ, «Կալմասորա», Կպոպեյան—սինթեթիկ վերջավորում 18 դարի:

ՌՈՄԱՆՏԻԶՄԻ ԵՊՈԽԱՆ

Ռոմանտիզմի ելույթը, ռոմանտիզմական չարժման ընդհա-նուր ահուճքները, վրացական ռոմանտիկ զգացողության առանձ-նահատկությունները: Բարաթաշվիլու վիշտը արձագանք բեկման նախորդող եպոխայի: Բարաթաշվիլին վոդյեբ մտածող: «Վրացա-կան վշտի» պատմական արձատները, Բարաթաշվիլու և վրաց. Նոր գրականության ունիվերսալ դադախարները. բանաստեղծական լեզ-վի և վոճի վերակառուցումը:

Ռոմանտիզմը և ռեակցիան: Գրիգոր Որբելիամիի ազգային ռոմանտիզմը. միջնադարի քաղաքական ու կուլտուրական իշխայը: Վախտանգ Որբելիամիի պոեզիայի պատմիկ-գիտաբանական և առ-գործունյա առեր:

Ռոմանտիկ դպրոցի արձակը. Ռեբելիշվիլի. «Ճիսկարի» առ-ազգիրը:

ԳիՈՐԳԻ Նրիսթալի գրամատուրգիան. չրջադարձ գեպի ռե-ստական թատրոնը. ընդհանուր ռոմանտիզմական ճանաչմի-նկարը. Դեմիել ճանաչմի:

ՌԵԱԼԻԶՄԻ ԵՊՈՍԱՆ

Յորտափրական ընական տնտեսության ճղնաթափը և ռուս-տրական կապիտալի մուտքը. աղնականության աղքատացումը: Կ. ՆԻԲԵՐՈՎԻ և Լ. Արդազիանի նատուրալիզմը վորպես գրական գեոսոփիաների սկիզբը:

«Թերգլալուները» և վրաց. մտավոր կյանքի վերածնունդը: Վորոնցովյան անտիպայի պաշտոնական լիբերալիզմի վախճանը, «Հարցերի հարցը»—նորոտափրական իրավունքի անկումը և «աղա-ապարումն ի վերուստ»:

Իլյա Ճավնավաձեճ և նրա ժամանակաշրջանը. պայթյալ խայտառների դեմ. «Ստորաթվեւոս Մոսմիւ»-նոր գրական լեզուն. սոցիալական դաշտափարներ գրականության մեջ. Իլյա Ճավնավաձեճ կենտրոնական դեմք ուսուցողական դարաշրջանի և սինթեզ վրաց. ազգային գիտակցության, յերկու վոճերի պայթյալը Ճավնավաձեճի գեղարվեստական արժեքների մեջ. նախորդ գրական շարժումը Ճավնավաձեճի գնահատումով. նոր Վրաստանը նրա գրվածքներում. Ճավնավաձեճի տնտեսական, սոցիալ-իրավական և պետական կոնցեպցիան. «Ոթարի ալրի»-ի հեղինակի սոցիալական հայացքների պատմական պայմանավորումը և դատակարգային սահմանափակությունը:

Ակակի Եերեթելի. ստեղծագործության ընդհանուր բնույթը, ֆորմալ գրական նույնատրություն: Պատմական և գրական հայացքները. ձգտումն դեպի ազատություն—ֆուլլոր. միասնական գեղարվեստական վոճի բացակայության արձագանքում ժամանակակից կյանքի խնդիրներին. Ա. Եերեթելու բերանփոխմանցյալի իդեալիզացիան կեղծ—պատմական պաթեթիկա. Ա. Եերեթելու գեմոկրատիկ ավանդները:

70-ական թվականների գլխավոր գրական խնդիրները. «Վերջին ումանտիկ» Մամիա Գուրելին. պաշտոնական մեջնանության դարաշրջանի յետադարձը և ուսուցիչ. «Իմեդի» խմբակը—ոպոյո-գիեիա ընդդեմ ԻԼՅԱ ՃԱՎԱՎԱՋԵՅԻ, գրական նարոդնիկության («мужиковствующие»), («Թեթիադա-մոթրոկալենի») — Սոպրոն Մղալրելիլի, Ն. Լոմաուրել, Յեկատերինա Գարալիլի, Անաս. Երիսթովա, Բաչանա, Իոսիֆ Դավիթալիլի:

Անկախ գրական նարոդնիկություն—Թաֆայեյ Երիսթով, Ալեք-սանդր Դադբեկ, Վատա-Փլավելա:

Ակակի Եերեթելու չկուլայի պլեյադան—Գր. Աբաշիճե, Յա-բելի, Դանդելիլի, Գ. Ճալադիդելի:

Կապիտալիստական հարաբերությունների աճումն և աղնական դասի աղջամուղջը. Գիորգի Եերեթելու սոցիալական վեպը. նարոդնիկության կրիզիսը և մարքսիզմի սկիզբը. քաղաքի պրոլե-տարիատի արշալույսն Նդնատի Նինոլիլի. քաղաքի և գյուղի փոխ-հարաբերությունը Նինոլիլի ստեղծագործության մեջ. մաքուր ունալիզմ և տեղեկացիա. աղնականության գեկլասսացիան—Դա-վիդ Կլեբալիլի և Շիո Արագվեոպիլելու պոլիտոլոգիզմը:

19-րդ դարի սկիզբը Վրաստանում համընկնում է վրացական անկախ թագավորութան վախճանի հետ: 1801 թվին Ալեքսանդր առաջինի մանիֆեստով Վրաստանը հայտարարվում է ռուսական կայսերությանն ինքնակամ միացած, բայց մոչ չափանդրութան համար, ինչպես ասված է մանիֆեստում և մոչ կայսերութան առանց այն ել ընդարձակագույն սահմաններն ընդարձակելու համար:

Փաստերի ներքին դիալեկտիկան ինքնին վճռեց հետագա քաղաքական բախտը: Մարտնչող ռուսական իմպերիալիզմն ինքն իրեն հիանալի պարզում եր իր խնդիրները, իսկ վրաց դինաստիայի բազմաթիվ ներկայացուցիչները տեսնում էին իրենց իշխանութան վախճանը:

Ֆեոդալական Վրաստանի վախճանը նախապարստված եր որչեկտիվ պարագաներով: Վրաստանը ներքուստ անկարող եր վերացնել ֆեոդալական կարգը, արքայորդիներն ու խոշոր ֆեոդալները թշնամացած էին, ներքին յերկայառակությունները քայքայում էին թագավորությունը:

Այն ժամանակվանից, յերբ Հերակլ թագավորի հոգում բեկում առաջացավ դեպի ռուսական որիենտացիան, հարևան մուսուլման թագավորությունները՝ Տաճկաստանը և Պարսկաստանը չէին թաղցնում իրենց անհանգստությունը: Նրանք չառլավ հասկանում էին, թե ինչ է նշանակում վտանգավոր ռուս ժողովրդի մտտիկությունը, և բոլոր ուժերով աշխատում էին կանխել վրաց դաշինքը ռուս կայսրների հետ: Յերբ հորդորները չոգնեցին, Աղա Մամադ խանի պարսկական զորքերը խուժեցին Վրաստան, և 1795 թվին կրծանիսի

մոտերը պարսիկները ջարդեցին վրաց զորքերին ու ավերեցին Թիֆլիսը:

Զառամյալ Հերակլ արքան փախավ դեպի Դարյալ, իսկ ոգնություն հասած Իմերեթի թագավորի զորքերը, տեսնելով, վոր բանը պրծած է՝ իրենք սկսեցին թալանել քաղաքը: Արքայորդիներն էլ, կազմած իրենց կուսակցությունները, դեռևս դահլիճից Հերակլ արքայի որով կոչվում էին դահի համար: Հերակլ արքան իզուր եր սպասում խոստացված ուս զորքերին. կայսերներն իմանում էին, թե յերբ և հարկավոր ուժ ուղարկել: Այդ պարսությունից հետո վճռված եր վրաց թագավորության բախտը, վճռված եր նաև Ֆեոդալական Վրաստանի բախտը:

Սակայն, ուսնական տիրապետությունը Վրաստանում հաստատվելուց հետո, աճում եր Ֆեոդալական շրջանների դժգոհությունը: Դահի վիրավորված թեկնածուներն ապստամբություն ապստամբություն հետևից են սարքում: Այդպես բռնկվում ե լեռնականների խռովությունը 1801 թվին, Կախեթիայի խռովությունը՝ 1804 թվին: Այդ յերկու ապստամբությունն էլ ձնշված են, խռովարար — ղեկավարներին — դժգոհ արքայորդիներին քեցին Ռուսաստան: Նրանց հետ առանձնապես խիստ եր վարվում Կովկասի կառավարչապետ իշխան Յիգիանովը: Գյուղացիությունը հարկերից տանջված, վերջին պատերազմներից քայքայված, թեպետ և մասնակցում եր ապստամբություններին, հատկապես 1801 թվին, բայց և այնպես ապստամբության յեղը չեր կարող լուծել:

Դրան ավելացրած նաև այն, վոր կայվածատերերը նվաճողներից հետ չեյին մնում անդթության մեջ, իսկ հաճախ էլ ուս կառավարությունը զանազան բարենորոգումներով ձգտում եր գյուղացիությանն իր կողմը դրավել: Սակայն արիստոկրատ շրջաններում ապստամբության դադախարը շարունակ պահպանվում եր:

Ապստամբության դադախարն առանձնապես ակտիվ հրահրում եր արքայորդի Ալեքսանդրը, դահաժառանգ-

ներից ամենաբմբաստը, վոր բաղմաթիվ կողմնակիցներ ուներ Վրաստանում: Նա մերթ յերեւում եր լեղդիական զորքերով, մերթ՝ պարսկական. լավ ընդունելություն ուներ պարսկական արքունիքում և բարեկամ եր Ավարիայի ու Դաղստանի բոլոր խաներին:

Ռուս ղեկաբրիստների շարժման ազդեցության տակ դարդացած վրաց աղնականության և ինտելիգենցիայի մեջ սկսվում ե խմորում և պատրաստություն ապրտամբելու:

Դեկտեմբերի 14-ի վախճանը չզգաստացրեց տաղ-գլուխ ռոմանսիկներին: Արքայորդի Ալեքսանդրն էլ բողալառ սյրոկլամացիաներ եր հղում: Այդպիսով, պատրաստվում եր 32 թվի դավադրությունը: Դավադրությունը ղեկավարում էին Դմիտրի և Ոլբոպիլ արքայորդիները, վորոնք գտնվում էին Պետերբուրգում և Մոսկվայում: Նրանց մոտ եր հավաքվում դավադիրների ապագա ակտիվը: Գաղտնի ընկերության կանոնադրությունը, վոր կազմված եր ըստ մասնական ժողովարաններն ձևի, գրված եր կուսակցին Ֆիլադելֆոս Կիկինաձեյի ձեռքով: Ընդհանուր առմամբ ծրագրերը համապատասխանում եր ղեկաբրիստների ծրագրին, թեպետ և նկատի էյին առնված Վրաստանի առանձնահատուկ պայմանները: Գաղտնի ընկերության մեջ մոտ մասնակցություն ուներ Սոլոմոն Դադաշվիլին՝ Թիֆլիսի գիմնազիայի ուսուցիչը և տրամաբանության դասադրքի հեղինակը: Դավադրության մասնակցողների կապի համար նա հիմք դրեց լրագրի, վորը սակայն բուրովին չեր արտահայտում նրանց ծածուկ մտքերը: Դավադրության մասնակցողները վորժ արին կադրեր հավաքելու նաև ստորին դասի շարքերում ու կապ հաստատեցին Թիֆլիսի Փրահսիական հյուպատոսի քարտուղար Լեռնեյի հետ:

Ապստամբության որը նշանակեցին 1832 թվի նոյեմբերի 20-ը: Այդ որը նշանակված եր աղնականների ժողով: Ժողովը հետաձգվեց, այն ժամանակ հետաձգեցին նաև ապստամբության ժամկետը: Նշանակված

տրը, ըստ ապստամբութեան պլանի, պետք է հարձակ-
վել յին դանձարանի և զինանոցի վրա: Ժողովին ներկա
գտնվելիք ռուս բարձրաստիճան գեմքերը պետք է ըս-
պանվելին:

Այնուհետև դանդերի ղողանջուռնի տակ յեկեղեցի-
ներին դուրս ելին բերվելու սուրբ պատկերները Ժո-
ղովրդին յերդվեցնելու համար: Բայց դավադիրներից
մեկը՝ Իյա Փալալանդիշվիլին պատմեց ամեն ինչ Թիֆ-
լիսի նահանգապետին: Դավադրութիւնը բացվեց և
Նիկոլայ առաջինի հրամանով սկսվեց քննութիւնը:

Դավադրութեան մասնակիցները պատժի յենթարկ-
վեցին: Արքայորդի Դմիտրին աքսորվեց Սմոլենսկ, ար-
քայորդի Ոքրոպիլը՝ Կաստրամա, արքայադուստր
Թամարան՝ Սիմբիրսկ, Գեորգի Երիսթովը՝ Լեհաստան,
Դմիտրի Որբելիանին՝ Պենզա, Գրիգոր Որբելիանին՝
Վիլնո, Դմիտրի Կիպլանին՝ Վալուդա, Վախթանգ Որ-
բելիանին՝ Կալուգա, Ալեքսանդր Ճավճալաձեն՝ Տամ-
բով, Իսկ Սոլովոն Դադաշվիլին՝ Իրկուտսկ, ռւր և մե-
ռալ:

Դավադրութեան համարյա բոլոր մասնակիցները
հետագայում աչքի ընկան գրականութեան մեջ. նրան-
ցից շատերը մոռացան իրենց քաղաքական ռոմանտիզ-
մը և բարձր աստիճանի հասան պատերազմների մեջ,
ռուս զորքի շարքերում: Դա յե հենց 19-րդ դարի վրաց
գրականութեան առաջին կադրը:

Սովորաբար 19-րդ դարի վրաց գրականութեան
պատմութիւնն սկսում են Ալեքսանդր Ճավճալաձեյից,
սակայն նոր պարագաները բոլորովին փոխում են դրու-
թիւնը: 19-րդ դարի սկզբին արքայորդի Հովհաննեսը
գրում է բացառիկ դեղարվեստական նշանակութիւն
ունեցող մի յերկ, վոր կոչվում է «Կալմասորա»: 60-ա-
կան թվերին Դմ. Բաղրաձեյի խմբագրութեամբ տպա-
գրվում է մի հատված «Կալմասորայից»: Բայց դա լոկ
աննշան հատված է: «Կալմասորա»-յի ամբողջ ձեռագի-
րը Պետրոգրադի գրապահեստներից վրաստան է բեր-
վում 1923 թվին, Խորհրդային Իշխանութեան որդի:

ռուս թանգարաններից վրացական Հնութիւնների վե-
րափոխադրման (ռեսկակուցիա) ժամանակ: Մինչե-
այժմ վիճելի յեր համարվում «Կալմասորա»-յի հեղի-
նակի խնդիրը. մեկ վերագրում է յին արքայորդի Հով-
հաննեսին, մեկ կիսատարկավադ Հովհաննես Ուելաշվի-
լուն, վորի արկածները նկարագրված են այդ գրքում:
Այժմ ստույգ տվյալների հիման վրա հաստատված է,
վոր հեղինակն է արքայորդի Հովհաննեսը:

«Կալմասորա»-յում նկարագրված է կիսատարկա-
վադ Հովհաննես Ուելաշվիլու շրջադարձութիւնը Վրաս-
տանում՝ տաճարի և վանքի կառուցման համար ընծա-
ներ հավաքելու նպատակով: Հենց կալմասորա խոսքը
նշանակում է ընծաների հավաքում: Կիսատարկավադը
Գորիում հանդիպում է Զուրաբ Ղամբարաշվիլուն՝
հայտնի ղվարճախոս և ծաղրածու մեկին և վերցնում
է նրան իր հետ: Յերկու բարեկամները շրջում են վողջ
Վրաստանը, լինում են բոլոր գյուղերում, ծանոթանում
են ֆեոդալների, հոգեւորականութեան և գյուղացիու-
թեան հետ:

Ահա այստեղ տրվում է 18-րդ դարի վրաց հասարա-
կութեան բարքերի վսեմ պատկերը: Վրաց գրականու-
թեան պատմութեան մեջ «Կալմասորա»-յի ամբողջ բը-
նագրի բացակայութեան պատճառով դեռևս չի գիտակց-
ված հսկայական արժեքն այդ պատմական գրքի, միա-
կը ֆեոդալական կենցաղի բնութագրման տեսակետից:
Յեւ հեղինակ արքայորդի Հովհաննեսը գրական մեծ
դեմք է դառնում: Նյութի մշակման, վոճի առանձնա-
հատկութեան, արտահայտութիւնների հակիրճութեան
և պատկերների հյութալիութեան կողմից այդ գիրքն
իւր համարար չունի վրաց արձակի մեջ: Անգամ Սարա
Սուլիսան Որբելիանին նսեմանում է նրա հետ համեմա-
տութեան օրինիս: Նրանում զգացվում է Ռարլեյի ղվար-
ճախոսութիւնն ու քրքիջը, և նույնիսկ հոգեւոր դեմ-
քերի նկարագրութեան ժամանակ կատարելապէս պահ-
պանված է աշխարհիկ գրեթէ բոլոր: Վրացական բառերը,
վորոնք Անտոնի կաթողիկոսն իր սխոլաստիկայով ար-

ժատախիլ եր արեւ, այստեղ իրենց հաղթանակն են տո-
նում: «Կալմաստութեա»-յի դիպրոցներն ապշեցնում են ի-
րենց համառոտութեամբ, ժանրերը խառն են և աչքի յեն
ընկնում բազմադանութեամբ:

Գիրքը մի ամբողջ ենցիկլոպեդիա յն տալիս, նման
Փրանսիական ենցիկլոպեդիստներին: Գուցե դիտական
նյութի առատութեունը դիտական հետազոտողների
համար պահանջները և գրվածքի գեղարվեստական ամ-
բողջութեունը, սակայն հանրադիտական տեղեկու-
թեուններն եւ զարմացնում են նոր դիտական տեղեկու-
նների հարստութեամբ, ինչպես նաև ունիվերսալու-
թեամբ:

Վորջան եւ բարձր չդասենք հեղինակի տեղյակ լի-
նեն իր ժամանակի դիտական մտքին, այնուամենայնիւ
«Կալմաստութեա»-յի գեղարվեստական արժեքը բացորոշ
կերպով գերակշռող է:

Բառացիորեն չկա մի դեմք կամ դեպք 18-րդ դա-
րում, վոր իր արտացոլումը չգտնի «Կալմաստութեա»-յի
մեջ: Այդտեղ են քաջատոհմիկ վոլտերականները, այդ-
տեղ են կալվածատեր իշխանները, վորոնք ամաչում են
Ծախել ձիերը, խի մարդկանց վաճառում են. այդտեղ
ազնվականները սպռալից կթան կովն են խլում, և վեր-
ջացնելով հետապնդել իրենց վրա հարձակված լեղզի-
ներին, կոդոպտում են սեփական ճորտերին: Հնարավո-
րութեուն չկա միառմի թվելու այն բոլորը, ինչ վոր
չոչափում է հեղինակը: Առաջին հատվածը խմբագրե-
լիս՝ հայտնի պատմաբան Դմիտրի Բազրաձեն վորձեց
թվել այդ հատվածում չոչափված հարցերը, և նրա պ-
ռաջաբանը միքանի տասնյակ եջանոց ցանկի վերած-
վեց: Պետրոգրադից ստացված դրքի մյուս մասերն ա-
վելի մեծ հետաքրքրութեուն են ներկայացնում, և «Կալ-
մաստութեա»-յի ամբողջ գրքի հրատարակումից հետո,
Վրաստանը կհարստանա գեղարվեստական հաղվա-
գյուտ եպոպեյայով:

19-րդ դարի սահմանադժոււ առաջին պոյետը, վո-
րի ստեղծագործութեան մեջ արտացոլվել են նոր դարի

հովերը, և վորով վերջավորվում են դրականութեան
հին տրագիկանները — Ալեքսանդր ձավնավաձեն է:

Վրացական ուսմանտղմի այդ նուխահայրը (հաս-
կանալի յն ուսմանտղմի այն ձեւը, վորը Յեվրոպայից
անցավ նախ՝ Ռուսաստան և ապա՝ Վրաստան), մաք-
րեց հաշիվները պարսկական սեկսուալիզմի հետ, վոր
18-րդ դարից ամբացել եր Վրաստանում:

Այդ տեսակետից Ալեքսանդր ձավնավաձեն 19-րդ
դարի ամենաբնորոշ դեմքն է:

Նա ծագում է վրաց ձավնավաձե իշխանների խո-
չոր ֆեոդալական տոհմից:

Այդ տոհմն առանձնատես աչքի ընկավ պոյետի
հոր՝ Գարսեվան ձավնավաձեյի որով:

Գարսեվանը վրաց Հերակլ և Գեորգի արքաների
դեսպանն եր ուսաց ցարի արքունիքում:

Հենց վոր վրաց վերջին թագավորների որիննա-
ցիան հաստատվեց դեպի Ռուսաստանի կողմը, ընթացիկ
քաղաքականութեան մեջ մեծ դեր սկսեց խաղալ վրաց
դեսպանը Ռուսաստանում:

Ռուս և վրաց արքունիքների հաճութեամբ պար-
դետորված Գարսեվան ձավնավաձեն զարգացավ վոր-
պես քաղաքական մի մեծ անձն:

Հարստութեունը և ծավալվող իրադարձութեունե-
րին մոտիկ լինելն ավելի ևս բարձրացնում էյին նրա
հեղինակութեունը:

Չոչափալոր «Կալմաստութեա»-ն դժագրում է Գարսե-
վան ձավնավաձեյի խաղացած դերի յերկվութեունը
Վրաստանի ճակատագրի խնդրում: Հեղինակը դառնո-
րեն դանդաղում է Գարսեվանից նրա շահասիրութեան
և անադնիլ խաղի համար, բայց հենց նույն տեղումն
եւ րնդծում է այն փաստը, վոր Գարսեվան ձավնա-
վաձեն ղեկավարում եր վրացական քաղաքականութեու-
նը և աղղում յերկրի բախտի վրա:

Այդ ընտանիքում 1787 թվին, Պետերբուրգում ծըն-
վեց ապագա պոյետ Ալեքսանդր ձավնավաձեն:

Նրան կնքել և Յեկատերինս անկողնոյն վարդապետին
Սկզբնական ուսումը նա ստացել և Պետերբուրգի լավագ
գուշի պանսիոններում, բայց, յերբ Գրաքնական ծավա
նավածն ծառայութեան գործերով ստիպված եր վե
րադառնալու վրաստան, իր հետ վերցրեց տասներկու
ամյա վորդուն: Այդ ժամանակ վրաստանում զեպրելը
զարգանում էին կատաւորոփիկ կերպով: Գեորգի
12-րդի մահից հետո, վրաց անկախութեան վերացումը
մեծ իրարարնցում եր առաջացրել դահի բազմաթիւ թեկ
նածուներին միջև: Կախեթիայում ապստամբութեան
ընդդէմ ուսներին՝ զեկավարում եր արքայորդի Փառ
նաղը, Հերակլ Թաղալորի վորդին:

Ակերքանդը ճավախավածն հարեց ապստամբությանը, սակայն ապստամբությունը չուտով ջախջախեց: Ծայր առավ արքայորդիների և նրանց բնտանիքների ընդհանուր արտաքսումը դեպի Ռուսաստան և հալածանքն ապստամբության մյուս մասնակիցների դեմ:

Արեքսանդր ձալնալանն հոր մատուցած ծառայությունների շնորհիվ պատժից ազատվեց :

Սկզբում նա աքսորվեց Տամբով, ուր փոխադրվեց նաև նրա հայրը: Բայց չուռով ներման արժանացավ և ընդունվեց պաթերի կորպուսը: Մասնակցեց Նապաթեոնի դեմ մղված կռիվներին, յեղավ Փարիզում, դարձավ Բարկլայ-դե-Տոլլիի աղյուսանտը:

Ուսումնասիրեց զերմաներեն և ֆրանսերեն լեզուները :

Հետագայում պաշտոնավարեց Կովկասյան զորքի չարքերում և ռազմական մեծ աստիճանի հասավ :

1832 թվին նա խառնվեց մի այլ դավադրության մեջ, բայց այս գեպքում էլ, չնորհիվ հոր դիրքի, նա հեշտ ու թեթև պրծավ. նրա դործը նման է իշխան Առլովի գործին, — ինչպես արտահայտվել էր Նիկողայ Խոստոմիրը, — այսինքն՝ նա զիտեր Խաչատուրյան թափն և չտեղեկացրեց այդ առթիվ։

Հասկանալի չէ, Վորդյանքի վայրիվերումները

յերկվաթյան դրոշմ են թողել նրա ասեղճագործության վրա:

Վրա: Մի կողմից նա բոլոր արմատներով մոտիկ էր հա-
բազատ իրականությանը, մյուս կողմից՝ նա ճաշակել
էր, ինչպես նաև այդ ժամանակի առաջավոր ողու մար-
դիկ, յեվրոպական լուսավորության պտուղը: Ահա զը-
րանք էյին, վոր պատրաստեցին զեկտեմբերյան ապրս-
տամբությունը Ռուսաստանում և 1832 թվականի դա-
վադբությունը Վրաստանում:

Վրաստանի քաղաքային ֆեոդալական դասակարգը
կորցրել էր իր վտանգի տակի հողը և մահվան տագնա-
պի մեջ նվիրվել էր սանձարձակ երոտիկմի և զգաց-
մունքների անարևելային։

Ֆեբրուարի 1-ին Ստալինը հանդես է եկել «Իսկապետ» թերթում հոդվածով, որտեղ նա պատմել է մոտակայի վայելչության մասին։

Իբ դարը վերջացնող ֆեոդալական դասակարգին ավելի ըստ սաղում եր պարսկական ղեկադանսի պոեզիան, և իսկական՝ 18-րդ դարի պոյետը տերակալ եր այն ժամանակվա մոտքերի, չուտով նաև զգացումների վրա: Պարսկական մոտրվները նա նրբության հասցրեց և նրա յերգերը լավում են ամբողջ վրաստանում:

Ալեքսանդր Ճավնալաճեմ հանդիսանում է Բեռլինի յերգերի կատարելագործողը: Նրա անհամար գաֆերը, մուսուսաղաղերը, մուհամբաղները, դադելները վառ կերպով արտահայտում են զգայնականության պոյեզիան:

Թվում էր, Վոր Բեսիկիին ալեքսանդրյան նորու-
թյունն անսահման է, սակայն Ալ. Ճավախյանն գտա՞յ
իր յերգը, և դրանից միքանիօր նույնիսկ դերադան-
ցում են Բեսիկիին յերգերից: Այդ տեսակետից հատկա-
պես արտահայտիչ է նրա գեղունական հիմնը:

(ՀԱՐԲՈՂՆԵՐ, ՈՒՐԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ)

Մտիկ լինելով 20 և 30-ական թվականների ուսուցչականությանը (նրա աղջիկն ամուսնացած էր Ա. Ս. Գրիբոյեդովի հետ), Ա. Ճավնավաճեմ չխուսափեց ուսմանտիկ դադարների աղղեցությունից: Նա հրաշալիորեն թարգմանել է Պուշկինի մի շարք լավագույն վոտանավորները, թարգմանել է նաև Ռասինի «Յիննա» վոդեվիլները:

Ալեքսանդր Ճավնավաճեյից է սկսվում վրաց դրահանության մեջ յեփրոպական տիպի գրական շկոլաների փոփոխությունը: Յեվ մեր առաջին ուսմանտիկ ղլխավոր դործը «Գյուկչայի լիճ» մեծ բանաստեղծությունն է, վորի մեջ հեղինակին հաջողվել է արտահայտել ֆեոդալական կենցաղի սնանկացումը:

Վոտանավորը խոր պեսսիմիզմով է տոգորված. պոյետը լճի վրա յեղած կոլիզեյի ավերակներն է տեսնում, մտքով սլանում է այն ժամանակները, յերբ այդտեղ փառահեղ քաղաքներ էյին ծաղկում, յերբ քարավանի ճամբաներով պերճանքի առարկաներ էյին փոխադրվում, վանքերում քաղցրանուշ սաղմոսներ յերգվում: Սյժմ միայն բուերն ու ղեռուներն են հյուսում իրենց բները:

Այնուհետև նա նկարագրում է սիրահարներին, վորոնք լճաի են գալիս՝ հիանալու մաքուր փրփուրով ու ալիքների լաղուրով, նկարագրում է գարնան փարթամ փթթումը լճի և ավերակների ֆոնի վրա, արհեստական հակադրությունների միջոցով տալիս է ուսմանտիկ վշտի պատկերը:

Ուսմանտիկական եպոխայի մյուս վար արտահայտիչը Գրիգոր Որբելիանին է (1802-1883): Ողոր ֆեոդալ Որբելիանիններն աղղալցություն մեջ էյին թագավորական տոհմի հետ և ժառանգաբար դրավում էյին գլխավոր հրամանատարի պաշտոնը վրաց արքաների որդի:

Գրիգոր Որբելիանինի ժամանակ այդ տոհմի անունը շատ էր ընկել, բայց նա իր անձնական հատկություններով վերստին բարձրացրեց այն: Գրիգորն իր ծառայությունն սկսում է վորպես պրապորշչիկ ուս դորքի մեջ, յերիտասարդությունն որերին նա տարված էր քաղաքական ուսմանտիկով, մասնակցություն է ունեցել 1832 թվի դավադրության մեջ, վորի ջախջախումից հետո փոխադրվել է Ռուսաստանից Թիֆլիս, իսկ յերեք ամիս չանցած, նախ՝ դեպի Վիլնո և հետո Ռիգա:

Ողղարկության ժամանակ նրա մոտ գտնվել է Ռելենի «Նալիլայիայի խոստովանության» թարգմանությունը, նաև «Յաքալի» վոտանավորը: Աղատության սերը և իր պատրաստակամությունը՝ ղոհվելու հանուն հայրենիքի — մոտեցնում է այդ բանաստեղծությունը Ռելենի «Նալիլայիայի խոստովանությանը» և նշում է հեղինակի այն ժամանակվա հալիչտակությունն ու հրապուրվելը:

Սակայն յերիտասարդության տարիների հրապուրները չուտով անցան և Գրիգոր Որբելիանին արագ առաջ ղնաց դինվորական ծառայության մեջ: Նա մասնակցեց լեռնականների դեմ մղված պատերազմին, և այդ հանգամանքը նրան հնարավորություն տվեց ցույց տալու իր անձնական քաջությունը և հերոսությունը, ինչպես նաև վարչական ձիրքը, յերբ Գրիգորը հաջորդաբար ղրավում էր սկզբում Դաղստանի չրջանի պետի, հետո Կասպից գծի բրիգադայի հրամանատարի և պետի պաշտոնը:

Առանձնաբեր նա առաջ ղնաց Հաջի-Մուրադի դեմ մղվող գործողությունների մեջ՝ մեկից ալելի անգամ փախուստ կաղմակերպելով նրա դժի վրա:

Հետագայում Գրիգոր Որբելիանին յերկու տարի փոխարինում էր Բարյապինսկուն՝ Կովկասի փոխարքայի պաշտոնով:

Գրիգոր Որբելիանին իր ղերքով կոչված էր գլխավորելու ղրույների կոնսերվատիվ խումբը, և յերբ վաթ-

(1007 / 33518) 6580-70



գունահան թխտիաններին պաշտպանողականներին և ազատամիտների միջև տաքացավ «Հայրերի և դավակներին» կոչվել, — Որբելիանին գլխավորում եր արխայիստների խումբը՝ պայքարի մեջ հանդես բերելով իր խառնվածքի ամբողջ թափը:

Բայց դատապարտված ֆեոդալական դատակարգը հեռանում եր, և առևտրական կապիտալիզմն անխնայ վռնչացնում եր արխայիստների կենցաղի ամբողջ փայտաները:

Որբելյանին ինքն եր խոստովանում իր պարտութունը հակադիր բանակի — ռազնոչինցինների կողմից: Յեւ իր կյանքը գերջին տարիսնուս սա գրեց «Սուշա Բոկուլանե» անունով պոյեմանման մի բան, վորի մեջ անձնատուր ե լինում նոր մարդու հանդեպ: Այդ վոտանալորի վերեն և ճարտասանական վոճը մատնում են, վոր հեղինակը ռազնոչինցիններին ընդունում ե միայն խելքով, բայց վոչ սրտով:

Որբելիանի լավագույն ստեղծագործությունը «Կենաց բաժակ» կամ «Խնճուղք մարտից հետո, Յերեվանի մոտ» պոյեմն ե: Այդ պոյեմայում նկատելի յե փուլավազում «тебе во сг, а не русских воинов» ի աղղկեցությունը, բայց դա միայն ֆորմալ կառուցվածքի տեսակետից, իսկ ընդհանուր առմամբ պոյեմը խորապես ինքնատիպ ե:

Այդտեղ Որբելիանի վոճը հասել ե արտահայտության ուժգնությանը, նրա նկարագրությունները վերաստանի բնության դեռ մինչև որս ել չեն գերադանցված:

Պոյեմի ընդհանուր սխեման հետևյալն ե. մարտիկները կովից առաջ վերհիշում են հայրենիքը, սերը... և այն ամենը, ինչ վոր մարդ կարող ե հիշել՝ մահվան պատրաստվելիս: Սակայն մահի մերձավորությունն այդտեղ ավելի յե սրում յերգչի զգացմունքները, և ամբողջ պատմական վրաստանն և անցնում նրա առջևից:

Հեղինակի մի իննասուգրի և քննադատի առեկով՝ նը-

րան հրաշալիորեն հաջողվել ե ներկայացնել պատմական վրաստանի այդ ֆանտաստիկ շքերթն ու զորաստեղ:

Այդ ֆոնի վրա հին ֆեոդալական վրաստանը ցուցադրված ե իր ամբողջ փայլով: Պոյետը ներկ չի խնայել՝ նկարելու համար անցած իդեալը:

Նույն հայրենասիրական ցիկլին ե պատկանում մյուս մեծ վոտանալորը «Թամարա Թագուհու Փրեսկան Բեթանի վանքում»: Այդ վանքը չինված ե Որբելիանիների տոհմական կալվածքում: Պոյետը դիմում ե Թագուհու խոնացած Փրեսկային և վողբում վրաստանի անդյալը:

Հեղինակի հուսկոսությունն ուժեղանում ե հնի և նորի հակադրությամբ:

Բանաստեղծությունները գրված են Ռիգայում: Պոյետը հիշում ե իր անհոգ պատանեկությունն իրենց տոհմական կալվածքում և առաջին սերը, այնուհետև նկարագրում ե կյանքի փոթորիկները և ավերածության հետքերը, մելանխոլիան հետզհետե նրբանում ե և վոտանալորի վերջը հնչում վորպես զուսպ հեկեկոց:

Գր. Որբելիանի սիրահարական վոտանալորների համարյա յերեք քառորդը նվիրված են քույրեր՝ Նիմա և Յեկատերինա Ճավնավանների, Ալեքսանդր Ճավնավանի աղջիկներին: Թե՛ Նինան՝ Գրիբոյեդովի այրին և թե՛ նրա յերկրորդ քույր Յեկատերինան՝ Մինգրելիայի տեր Դադիանի կինը, վաղ այրիացան: Գրիբոյր Որբելիանին անհույս կերպով սիրահարված եր Նիմայի վրա, բայց սա հավատարիմ մնաց ամուսնու հիշատակին, և Գրիբոյր Որբելիանին նույնպես մինչև կյանքի վերջը հավատարիմ մնաց այդ սիրույն և ամուրի մեռավ:

Այդ սրտառուչ սիրույն նա շատ անգամ անդրադառնում ե իր բանաստեղծությունների մեջ և «Մինանդալիի վարդը» (Մինանդալին Ճավնավանների տոհմական

կարլաճքն եր) զանազան վարեացիներով զարդարում է նրա սիրտ լիրիկան:

Գրիգոր Որբելիանին տուրք է տվել նաև պարսկական լիրիկային: Նրա Մուխամբադի, Լոսլանա և այլ ձևի վոտանավորները զբաղած են բեսիկիի և Սայաթ-Նոստի արտագության տակ, սակայն Որբելիանին դարաշրջանի համար պոյեզիայի այդ տեսակն այնքան սահմանափակ էր, վոր աշտեղ ասանելին չի զգացվում եպիգոնը, ընդհակառակը, միջանի գործերում նա ավելի ուժեղ է իր նախորդներից: Այդ վոտանավորները ներդաշնակ են, կոնկրետ պատկերներով ղեղուն, գրված են թիֆլիսի ժարգոնով: Գր. Որբելիանիի, ինչպես նաև Ալեքսանդր Զավալալաձեյի մեջ զգացվում էր անցնող ֆեոդալիզմի խրախճանքը, և եպիկուրեիզմը մինչև ծայր է հասցրած:

Այդտեղ զինին խլացնում է խոր վիշտը և խժովում է նրա համար, վորպեսզի մարդը զգաստանա և չտեսնի իր անկումը, ինչպես արտահայտվում է հեղինակը:

Դինու որհներգն անցնում է կնոջը և շրջափակվում ողմանտիկ զգացողության շրջանը:

Արխայիստների ղեկավար Գրիգոր Որբելիանին հասըրտացրեց վրացական վոտանավորը, հաղորդելով արտասովոր սեղմություն և ստեղծելով իր տեսակի Vers libres: Նրա գրական ակտյանը, հակառակ բանակի առաջնորդ Իլյա Զավալալաձեյի ստիպված էր խոստովանելու, վոր Որբելիանին առաջինը ցույց տվեց վրացական անհանգ վոտանավորի արտասովոր որինակը և ապացուցեց, վոր վրացերեն խոսքն իր շեշտն ունի, նա յեր, վոր ապացուցեց աղատ վոտանավորի հնարավորությունը՝ թափով և յերած չտականությամբ չզրկող հանգավոր վոտանավորին:

Հետագայում Ի. Մաչաբելին ոգտադործեց այդ նորությունը Շեքսպիրի թարգմանության համար:

Որբելիանիի տողերի ներքին ալիտերացիան և հընդունադիրը ռազմական տեսարաններում և բնության

նկարագրության մեջ զարմանալիորեն ճշգրիտ վերարտադրում են արտահայտության հնչական պատկերը:

Որբելիանին թարգմանել է ոուս պոյետներին: Այդ թարգմանություններից միջանիսը, ինչպես Պաշկևիևի և Ռլեյեյի, նույնպես և կրիլովի առակները և ժուկովսկու բալլադները կատարված են մեծ վարպետությամբ:

Գրիգոր Որբելիանին հետևում են Ալեքսանդր և Վախթանգ Որբելիանիները:

ԱԼԵԿՍԱՆԴՐ ՈՐԲԵԼԻԱՆԻՆ (1801-1869) նույնպես մասնակցել է 1832 թվի դավադրությանը և ըստ միջանի աղբյուրների՝ նա նույնիսկ հանդիսանում է ղլխավոր կազմակերպիչը:

Նա մինչև իր կյանքի վերջն անհաշտ մնաց և դեռ 50-ական թվականներին զաղտնի կապ ուներ Ծամիլի հետ, բայց նա այդ գործում մենակ էր: Այդ ժամանակները վրաց աղնվականությունը բավականաչափ ուսացած էր և կովի դաշտերում, թե՛ Ծամիլի և թե՛ Տաճկաստանի ու Պարսկաստանի դեմ, պատերազմում էր ոուսաց զորքի շարքերում:

Դրանով է բացատրվում, վոր Կովկասի այն ժամանակվա փոխարքա Մ. Ս. Վարանցովը չթողեց լայնորեն հրապարակելու Ծամիլի հետ ունեցած ճակատամարտի գործը և բավականացավ միայն անձնապես վերջովելով:

Ալեքսանդր Որբելիանին տնային կրթություն ստացավ, հետո սովորեց Պետերբուրգի դինվորական դպրոցում, սակայն կարիերա ձեռք չբերեց, չուտով թողեց պաշտոնը և ամբողջովին կլանվեց հասարակական գործունեությամբ, մոտ մասնակցություն ունենալով ամսագրերի և գրքերի հրատարակման գործին:

Գրել է չատ և դանադան թեմաներով, բայց և այնպես գրականության մեջ հատուկ հետք չի թողել: Նրա վոտանավորներն անգույն են, դրամաները կոնկրետությունից զուրկ և անցյալից են խոսում:

Քննադատական հետադոտությունները և մոնոդրաֆիաները ղիլետանտիզմով են տառապում, թեպետ

և դուրի չեն սուր հետաքրքրութունից և հաճախ մտքի
թրությունից ու հոտառությունից:

Նրան ավելի դրավում են պարժական թեմաները,
մասնավորապես նրա պատշ Լեռակի վերջին թագավո-
րության շրջանը:

Նրա գործերը տենդենցիոզ են. նա չափազանց նա-
հապետականորեն է լուսաբանում Վրաստանի պատմու-
թյունը, առանձնապես այդ նկատելի յե «Ճորտատի-
րական իրավունքը Վրաստանում» հետադոտության
մեջ, ուր նա իդեալականացման յե յենթարկում ճորտա-
տիրական հարաբերությունները:

Այն ժամանակ, յերբ Հովհաննես արքայորդին իր
«Վարժասորա» եպոպեյայում խարաղանում է ֆեոդալ-
ների կամայականությունը, ստրկավաճառումը և ֆեո-
դալական իքավակարդի մյուս դպրելի մնացորդները,
Ալեքսանդր Որբելիանին իդեալականացնում է այդ խայ-
տառակ անցյալը և յերանելի հին ժամանակներին տրա-
դիցիաներով և քողարկում այն:

ՎԱՆԹԱՆԳ ՈՐԲԵԼԻԱՆԻՆ (1812-1890) նույնպես
թոռն է Լեռակի արքայի: Դատտիրակվել է Վելիա
թագուհու, մեծ դարգացման և դդայուն սրտի տեր մի
կնոջ հսկողության տակ: Մանկության հիշողություն-
ներն անջնջելի մնացին Վախթանգ Որբելիանիի կյան-
քում և նախասահմանեցին նրա պատկիլ-դիտողական
և անդործունյա սյուզիան:

Նա նմանապես մասնակցություն է ունեցու դա-
վադրությանը, նույնպես աքսորվել է և նմանապես
անցել զինվորական կարիերա: Բայց նա իր ամբողջ
կյանքում հիվանդադին կերպով սրտին մոտ եր բնդու-
նում Վրաստանի ճակատագիրը և իր ստեղծագործու-
թյունը ահամանափակում եր միայն այդ շրջանով: Նա
անխնա ծաղրում եր Գրիգոր Որբելիանին նրա եպի-
կուրյան լինելու համար, աչուդական տոնով դրված
վոտանավորների և տոնավաճառային ուրախության
համար:

Դատտիրակված Դյոթելի, Շիլլերի, Շեքսպիրի

կլասիկ պոյեզիայի նմուշներով, նա իր բանաստեղծու-
թյուններում չատ անգամ կոչ է անում կրկին կարդալ
նրանց յերկերը: Վախթանգ Որբելիանիի մեջ ուշ դարթ-
նեց պոյետը: 45 տարեկան հասակում նա տպագրեց իր
առաջին վոտանավորը, թեպետ նա ծնվել եր, կրթվել
և մեծացել ուսմանտիգմի դարաշրջանում, այնուհան-
դերձ հարեց իյյա ձավնավաճելի ռեալիստական նոր
դպրոցին:

Իսկապես նա միայն այդ ժամանակ գիտակցեց իր
բանաստեղծական կոչումը: Բայց և այնպես նա այլ
սերնդի մարդ եր և նրա ստեղծագործության յերկվու-
թյունը մինչև վերջ վորոշում է նրա ուղին:

Այնուամենայնիվ, նա հնի հետ է կապված, նրան
պակասում է Գրիգոր Որբելիանիի և Բարաքաշվիլու
ամբողջականությունը, մյուս կողմից՝ 60-ական թվա-
կանների պոդետիվ գաղափարները խորթ մնացին նրա
հոգուն, և նրա ազդատիրական լիրիկան դուրկ եր քա-
ղաքացիական դրույթից:

Վախթանգ Որբելիանին իր ավագ ուսմանտիկ նա-
խորդների նման նկարագրում է Վրաստանի անցյալը,
բայց նրանում ելի հույսի չողեր կան:

Յեթե Գրիգոր Որբելիանին կարծում եր, վոր Վր-
րաստանը վերջանում է Որբելիանիի տոհմի հետ միասին
(նա ինքն անդավակ մնաց, և առհասարակ նրա աչքի
առջև տոհմն այլասերվում եր), մինչդեռ Վախթանգ
Որբելիանին ավելի հեռուն է տեսնում և յերբմեծ նրա
հայացքը լուսավորվում է մեսախանիգմով:

Դա գդացվում է առանձնապես «Հույսեր» և «Խաչը
Վոստերից» վոտանավորների մեջ, ուր ասվում է, թե
փառավոր պատմություն ունեցող ժողովուրդը չի կա-
րող կործանվել:

Վախթանգ Որբելիանիի գրվածքներում դգացվում
է նաև անորոշ ակնարկ քաղաքացիական մոտիվների,
սակայն նրա սոցիալական իդեալը դուրկ է դասակար-
դային գիտակցության ուժգին աղդակներից և մակե-
րեսային բնույթ ունի:

Այդ մոտիվը ցուցանիչ է ողմանտիկ դիտակցութեան ճգնաժամի և դալիք փոթորիկների անորոշ նախադրացման:

Վորպեա խոսքի վարպետ Վալսթանգ Որբելիանին զիջում է ավադ սերնդի սոյեռներին. նրա վոճն անարտահայտիչ է, բանաստեղծական հղացումը թույլ, նրկատվում է միորինակութուն և հետևորդութուն:

Նա սրատահանորեն է ընկել 60-ական և 70-ական թվականներին մեջ. դաբաշրջանի վերջին և նրա շարժող ուժերը, վոր ուրիշներին մի ամբողջ աշխարհայացք տվին, չդիպան նրան այն չափով, վորպեսզի որդանական դարձնեյին: Բայց այն էլ, ինչ վոր արտահայտել է Վալսթանգ Որբելիանին, նվաղ բնորոշ է դաբաշրջանի եվոլյուցիայի և դրական վոճի տեսակետից:

Վրացահան ողմանտիկմի առաջնորդ է հանդիսանում սոյեռ Նիկո ԲԱՐԱԹԱՎԻԻՆ (1816-1845): Բարաքաշվիլի տոհմը Որբելիանիների մյուս ճյուղավորումն է, և սոյեռի մայրը Որբելիանիներից էր, սոյեռ Գրիգոր Որբելիանիի հարադատ քույրը:

Բարաքաշվիլու հայրը՝ Մելիտոնը յերիտասարդ ժամանակ յեղել է աղնվականության առաջնորդ: Փոխարքա Ս. Ս. Վարանցովի սրառտի աղմկալի կյանքը և վարանցության եպոխայի ամբողջ սխտեմը շուտով սնանկացնում են նրան, և Բարաքաշվիլին զգացել է համարյա անղբատացման դառն վիճակը:

Բարաքաշվիլու ստեղծագործության սոցիալական արմատները կալվածատեր-աղնվականության քայքայման մեջ են:

Բարաքաշվիլին, ինչպես նաև նրա հասակակից հարուստ արիստոկրատ ծնողների զավակները, սկիբնական տնային կրթությունն ստացել և ընտանիքում իր մոր, ժամանակի նշանավոր կնոջ հսկողության տակ:

Այնուհետև նա ընդունվում է Կոյուբանի յեկեղեցուն կից ծխական դարոցը, հետո աղնվականների պանսիոնը:

Նույն դիմնադրայումն էլ նա ավարտեց ողման դասընթացը: Այդ ժամանակ սնանկանում է նրանց ընտանիքը, և նա խիստ կարիքի մեջ է ընկնում. բանն այնտեղ է հասնում, վոր ապագա սոյեռը դասագրքի փող չի ունենում, ավելացրած նաև նրա գլխին յեկած դժբախտությունը — վոտքը կոտրվում է, վորի պատճառով նա ընդմիշտ կաղ մնաց:

Տպավորվող և կենսուրախ յերեխայի համար, նաև այնքան չարաճճի ու հանաքչի, այդ դեպքն ունենում է ճակատագրական հետևանքներ:

Հիանալի կերպով ավարտում է դիմնադիան և չքավորության պատճառով նա չի կարողանում համարյաբան ընկնել կամ դիմնորական ծառայության ընդունվել: Նրա ֆիդիլական արատի համար դռները փակվում են նրա առջեւ:

Այդ շրջանի նամակները լի յեն կյանքի խտության, ճակատագրի դաժանության դեմ ուղղված բողոքով:

Հետագա կրթության փոխարեն, վորին նա այնպես ձգտում էր, Բարաքաշվիլին ստիպված էր ծառայության մտնելու դատարանի երեսպեդիցիան և չնչին ողճիկով պահելու իրենց ընտանիքը:

Այդ դրությունը շարունակվեց մինչև նրա մահը, իսկ նա բոլորովին ջահել մահացավ՝ ստեղծագործական տեսակետից դեռ հասունացած:

Մնալով Թիֆլիսում՝ նա ամբողջապես խրվեց աշխարհիկ կյանքի վիճը. նրա ծագումն իր առաջ բացում էր բարձր դասի դռները, աղբատությունը միայն նախան վիրավորանք էր յերիտասարդ սոյեռի համար:

Շուտով նա դարձավ շրջապատող հասարակության հողին և բաց չեր թողնում և վոչ մի հանդիսավոր ճաշկերույթ և վոչ մի սրահահանդես: Ամենուր նա ցանկալի հյուր էր. սրամտությունն ու աշխույժ բնավորությունը նրան անփոխարինելի էյին դարձնում:

Գտնվեցին մարդիկ, վորոնք այդ դատարի կյանքից հոգնած՝ սկսեցին խորհել մայրենի գրականության ճա-

կատարելի մասին: և այստեղ եւ Բարաքաշվիլին գլխաւորում եր բարեկամների նոր շրջան:

Շուտով նա զգաց շրջապատող դասի արտաքին խաբուսիկութիւնը, դուհիկութիւնը՝ չինոյնիկական կյանքի և աղնվականութեան սանձարձակ երախտանքի, և նրա մեջ հողեկան բեկում առաջացաւ: Նա սկսում է ունկնդրել խղճի խորհրդաւոր ձայնին, վոր նոր վիճակ է բացում նրա համար:

Գարշելի ամայութիւնը, շրջապատողների յետախրութիւնը և նիկալայիւկան ուժիմի քաղաքական ճշմարտութիւնը են նրա տրամադրութիւնը:

Այդ ժամանակ մինչև Վրաստան և հասնում Յեւթրոպայի ռոմանտիկական պայքարների վորոտը: Բարաքաշվիլու մեջ արձագանգ է գտնում Բայրոնի մոռյլ հոռետեսութիւնը, և պոյետը վերջնականապես ինքնուրոշվում է:

Բայրոնիզմի դրոհը, Պուշկինի և Լերմոնտովի աղդեցութիւնը խոր հետք չի թողնում Բարաքաշվիլու ստեղծագործութեան վրա, նրա վաղաժամ հասունացած հանճարն իր մեջ հաղթահարում է այլ պոյետների աղդեցութիւնը և ներծծելով հախուռն դարի ընդհանուր հեղեղը՝ դառնում է սահմանափակ և ազդային:

Բարաքաշվիլին ընդարձակեց դադախարների սահմանադիւծը, և առաջին անգամ 19-րդ դարում Վրաստան և մտցնում համամարդկային մոտիվներ:

Համախարհային վշտի արմատը նրա մոտ աղդային հայտարարի յե բերվում, — ահա դրանումն է Բարաքաշվիլու կոչումը վրաց պոյետիւայում, — ըստ Իլյա ձալմալաձեյի արտահայտութեան:

Վերջինիս հոգւածը Բարաքաշվիլու ստեղծագործութեան մասին պոյետիւայի և եպոխայի վերլուծման խորութեամբ հանդիսանում է վորպես ճնշադատական մտքի կլասիկ նմուշ:

Իր ստեղծագործութեան սկզբին Բարաքաշվիլին չի խուսափել պարսկական լիրիկայի աուրբից, ճիշտ է,

այդ վոտանաւորները փոքրաթիւ են, բայց և թանկեցում են պոյետի անցած բանաստեղծական տրադիցիոն ճամբան:

Սոխակներն ու վարդերն այստեղ եւ կանչում են իրար և ռոմանտիկական տխրութիւն են բերում անցած սերը հիշելիս:

Սակայն Բարաքաշվիլին արագ ու ընդմիջտ կանգնեցնում է այդ լիրիկան, նա խորանում է մինչև հասարակութեան սոցիալական արմատները և հասարակական փոխհարաբերութիւնների նրա սուր վերլուծումը տալիս է նրան իրավունք իր դարաշրջանի առաջին մտածող պոյետը լինելու:

Բարաքաշվիլու մոտ իր սերնդի բոլոր պոյետներից, նաև հետագաներից աւելի սուր կերպով զգացվում է անցումը դեպի նոր դարաշրջան, նա արտահայտում է վիշտը նոր մարդու, վորը տեսնում է զգում է իրեն ծնող դասակարգի անկումը և դալարվում է մահամերձ հոգեվարքի մեջ:

Այստեղ ապրումների խորութիւնը և դարաշրջանի արտահայտութիւններն անցնում են այլ կյանքի սահմանագիծը և ազդանշան են տալիս այդ կյանքին:

Բարաքաշվիլու հոռետեսութիւնն ընդհանուր փիլիսոփայական արմատից է բղխում, բայց նրա ստեղծագործութեան սոցիալական վերլուծումն առանց դժվարութեան պարզում է հասարակական արմատները: Նրա հոռետեսութիւնն իր ժամանակակից Վրաստանի հասարակարգից է բղխում:

Վարանցոյկան դարաշրջանի պաշտոնական հաշտեցումը նիկալայան ուժիմի հետ վերածնվող աղնվականութեան համար ճեղքվածք տուեց. փառահեղ պարահանդեսները և դիմականդեսները թունաւորում էլին հասարակութեան վերին շերտերի ճաշակը, բայց և դառն եր այդ շերտի զգաստացումը:

Աղնվականութիւնը սնանկացման եր դնում:

Կապիտալիստը տեսնում էր իր գործը, մթնոլորտում զգացվում էր ֆեոդալական հարաբերութիւնների Վախճանը:

Պոյետի նրբադպաց լսողութիւնն ավելի ուժգին եր
լսում այդ ձայները, ամենուր հիշեցնելով անցյալ ու
ղիների կորուստը:

Հանձինս Բարաք-աշվիլու նրան ծնող դասակարգն
դղում եր թաղման քայլերդը և տանջվում անելանելի
վշտից: Այդպէս եր կատարվում տնտեսութեան մեկ ձևի
անցումը դեպի մյուսը:

Վարանցովի փորձերը փրկելու աղնականութիւն
նը — հակառակ հետեմանքներ ավին, բայց արդեն բո-
լորովին անգիտակից եր այդ աշխատանքը, փորձառու
պալատականը նրբին կերպով այդ բանը հաշիվ յեր ա-
ռել:

Չգացմունքների այդ խլրտումը և անցողիկ մոմեն-
տի տանջանքն ամենից ավելի պարզ կերպով նկատվում
է Բարաք-աշվիլու «Բեդի Բարթիսա» («Վրաստանի ճա-
կատագիրը») պոյեմում: Դա դրված է Բայրոնի նոր
ժանրով, բայց առանց բայրոնական դրույթի:

Պոյեմայում նկարագրված են վրաց թագավորութեան
վերջին որերի պատմական դեպքերը, Աղա Մամադ-
խանի արշավանքը, Թիֆլիսի ավերումը, վոր որսկե-
տիփորեն վճռեց Վրաստանի բախտը: Հակադրվում են
յերկու ուղղութիւն. Հերակլ թագավորը հակվում է
դեպի ոռւս որիննապէս, իսկ պետական կանցլեր Սոլո-
մոն Լեռնիձեմ հետապնդում է հակառակ հայացք:

Կանցլերը տեսնելով անել դրութիւնը՝ դարձյալ
կարծում է, վոր ճշմարտամ կարելի կլինի անցկացնել
սեփական ուժերով:

Թագավորի կարծիքը հաղթում է, և վայրկենական
դիալոգը տրված է լսիկնական կերպով:

Հեղինակի համակրութիւնն ուղղված է դեպի կանց-
լերը, վոր համոզում է թագավորին, թե վրաց և ոռւ-
սաց ուղղափառ հավատի միասնութիւնը դորձին չի ող-
նի, յերբ պետութիւնների նպատակները հակադրի են,
ոտխակի համար հեշտ չի, յեթե վանդալը վոսկուց է
չինած:

Սակայն Վրաստանի բախտը լուծված եր թագավո-
րի սրտում:

Այդ պոյեմում Բարաք-աշվիլին բացորոշ արտահայ-
տում է իր քաղաքական հայացքները:

Հեղինակի տեսակետը համատեղվում է 32 թվի դա-
վադութեան մասնակիցների քաղաքական ծրագրի հետ,
իսկ դա համատեղվում եր ոռւս գեղարքիստների ծրա-
գրի հետ:

Բարաք-աշվիլին պարզորեն պաշտպանում է կառա-
վարութեան սահմանադրական ձևը և վայելուչ հար-
գանք ցուցադրելով դեպի Հերակլ թագավորը, նրա բո-
լորից ճանաչված հերոսական սխրագործութեան և ծա-
ռայութիւնների համար, անհնար է դնում, վորպեսզի
մի մարդ վճռի ժողովրդի բախտը:

Պոյեմում համընթաց տրվում է վրաց կնոջ հերո-
սական բնավորութեան նկարագրութիւնն անցյալում և
վրացուհու թեթեամտութիւնն իր ժամանակում, յերբ
Վարանցովի նյութած թակադրները, փարթամութիւն-
նը և հարստութիւնն ամենից առաջ փոփոխեցին կա-
նացի սիրտը:

Այդ պոյեմում բնութեան նկարագրութիւնը, պատ-
կերների առատութիւնը և անընդհատ վոդեվորութիւն-
նը մինչև այժմ անգերադանցելի յեն:

Բարաք-աշվիլու հոռետեսութիւնը դուրի չէ գործոն
բնույթից և քաղաքացիական ամուր դրույթից:

«Մերանի» (Նեղաս) բանաստեղծութեան մեջ, վոր-
տեղ հեղինակը մարգարեաբար նախագուշակեց իր մա-
հը, նույնիսկ մահվան պարագաների մանրամասնու-
թիւնները, Բարաք-աշվիլին դիմում է նժույգին, ձիու
մեջ ցուցադրելով իր պոյեզիան՝ խնդրում է նրան տանել
հեռավոր յերկրներ, հեռու՝ հարազատներից, մոտիկ
ընկերներից և սիրուհուց:

Այնտեղ, ուր հասնի դիչերը կամ լուսաբացը, այն-
տեղ կլինի հայրենի հողը, և միայն ուղեկցող աստղերին
կպատմի իր սրտի գաղտնիքները:

Նա չի ցանկանում թաղվել հայրենի հողում, քոր
հարազատներն ու մոտիկները վողբան իր վրա, թող
ազգայինն անապատում գերեզման փորեն, և սղափոր
քամին իր շիրիմը հողով ծածկի:

Նա չի ուզում հպատակվել ճակատագրին և մահին
կռվի յե կռուժ. վորպես մխիթարություն կմնա այն,
վոր զուր չի անցնի հողու տանջանքը, կմնա նժույգի
հարթած ճամբան և կհեշտացնի մի այլ յեղբոր ուղին՝
անվահեր կռվի բռնակուռ համար ճակատագրի դեմ: Այդ
բանաստեղծությունը՝ գրված մի պատահական առի-
թով, նվիրված է նրա մորյեղբայր Իլյա Որբելիանուն,
վոր գերի յեր բնկել Շամիլի ձեռքը, սակայն այդտեղ
պոյետին հաջողվել է արտահայտել իր դադունի ապ-
րումները. խկապես նա մեռավ հայրենիքից հեռու —
Գյանջաում, ուր և թաղվեց. հարազատները և մոտիկ-
ները չկարողացան վողբալ նրա մահը, միայն 93 թվին
նրա աճյունը Գյանջայից բերվեց Թիֆլիս. աճյունի տե-
ղափոխությունը վերածվեց համաժողովրդական հան-
դեսի:

Նույնպիսի տրամադրություն կա և «Քուռի ափին»
վոտանավորի մեջ: Նկարագրելով բախտի փոփոխակա-
նությունը և աշխարհի ունայնությունը, վորից վոչ
վոչ չի փախչի պոյետը բանաստեղծության վերջում ա-
րիություն է ձեռք բերում և այսպես վերջացնում. —
«Բայց քանի վոր մեղ մարդ են կոչում, և մենք յերկրի
վորդիքն ենք, պիտի դարձյալ հետևեինք նրան և լսենք
նրա ձայնը: Բանի պետք չի, վոր կենդանի մարդը մե-
ռածին նմանի, քայլի յերկրի վրա և վոչնչով չօգնի
նրան»:

Բարաքաշվիլու սիրային վոտանատրները նվիրված
են Յեկատերինա Դադիանիին և Նիկո Գրիբոյեդովային,
վորի վրա սիրահարված էր նա, բայց նույնիսկ բացար-
ձակ կերպով չէր կարող յերգել իր սերը մորյեղբայր
Գրեգոր Որբելիանիի պատճառով, վոր ամբողջ կյան-
քումն կապված էր այդ կնոջը և իր քրոջվորդուց ավելի
կերկար ապրեց:

Թիքանի բանաստեղծություններ նվիրված են Գրե-
գոր Որբելիանիին. այդ վոտանավորներում պոյետն հի-
շում է իր մանկությունը և պատանի հաճկում Որբե-
լիանիի հետ կարախում անցկացրած անվրդով խնճույք-
ները, սակայն այդ բանաստեղծություններն ել լի յեն
մեխանիստիայով: Պոյետի անհատապաշտական տրամա-
դրության տեսակետից բնորոշ է «Նապոլեոն» վոտա-
նավորը:

Բարաքաշվիլին վրացական վոտանավորին ինտիմ
թրթիռ հաղորդեց. նրա լիրիքականությունն արտասո-
վոր է: Վրաստանում մինչև այժմ Բարաքաշվիլու ուժը
ծառայում է վորպես չափանիշ լիրիքական վերելքի:
Նրա աֆորիզմի հասնող մտքերը, ինչպես և Տուրգենևի
գրվածքներում, չափած—կշոված չեն, և չնայած այդ
մտքերի պատռության, վոտանավորն անսահման յերա-
ժշտական է:

Դեռ պոյետի կենդանության ժամանակ այդ անտիպ
բանաստեղծությունները յերգվում էին ամբողջ Վրաս-
տանում և մինչև այժմ ել ժողովրդական մասսաների
մեջ յերգվում են ամեն տեսակի դործիքների նվազա-
կցությամբ:

Այդ վոտանավորներից միքանիսն, որինսի՝ «Չար
վոգին» («Սուլո Բորստո») այնքան ժողովրդական են,
վոր թվում է, թե ժողովրդի ստեղծագործության ար-
գասիք լինի:

Թարմացնելով իդեաների աշխարհը, ունիվերսալ
գարձնելով այն՝ Բարաքաշվիլին վերականգնեց վոտա-
նավորի ձևը: Նրա բանաստեղծական յեղուն մոտեցալ
ժողովրդականին, նա ստեղծեց վոտանավորի բազմա-
թիվ չափեր և կերտեց այսպես կոչված Բարաքաշվիլու
չափը (մետրիկան):

Նա իր վաղաժամ մահվան պատճառով համեմատա-
բար քիչ է գրել, սակայն նրա ամբողջ գործը վկայում է
վարպետի հասունության մասին:

Բարաքաշվիլին ուտանափկ դարաշրջանի ամենա-

կատարյալ պոյետն ե, նրան հաջողվեց արտահայտել իր սերնդի ակնկալիքները և կանգնել յերկու աշխարհների սահմանադժուկում:

Նրա ազդեցությունն հսկայական ե հետադա պոյետների վրա, և մինչև որս ել նրա յերգերը, ինչպես Պուշկինին, լավում են բոլոր շրջանների զանազան պոյետների յերկերում:

Այդ սերնդի ողմանտիկներին ե պատկանում նաև Գիորգի Երիսթավի (1811—1864): Սակայն նրա դրական կյանքն այլ կերպ դասավորվեց, և վրաց գրականության պատմության մեջ նրան վիճակվեց ուրույն դեր խաղալ:

ԳԻՈՐԳԻ ԵՐԻՍԹԱՎԻՆ նույնպես հարում եր 32 թվի դավադրության մասնակիցների սերնդին, բանտարկության ժամկետը լրացնելուց հետո՝ նա ազատվեց Լեհաստան և հետո վերադարձավ հայրենիք:

Լինելով կրակոտ ողմանտիկ՝ Գիորգին վողբում ե Վրաստանի պատմական ճակատադիրը և իր վտարումը: Լեհաստանում յերիտասարդ պոյետը ծանոթանում ե Միցկևիչի պոյեզիային, գերվում ե նրանով և վարակված լեհական մեսսիանիզմով՝ շատ ե թարգմանում Միցկևիչից և լեհական այլ պոյետներից: Նրա բայնաստեղծական փորձերը թույլ են, վոտանավոր գրելը չեր հաջողվում նրան, թեպետ նա յերկար համարում եր: Նա այդպես ել յերկրորդական բոյետ և թարգմանիչ կմար, բայց միջանի պայմաններ խիստ փոփոխեցին նրա ճակատադիրը:

Այդ ժամանակ Կովկասի փոխարքա Մ. Ս. Վարանցավի բարենորոգումների շրջանն եր: Նա Թիֆլիսում հիմնեց ռուս թատրոն, խաղական ուղերա:

Միտք ծագեց հիմնել վրաց թատրոն և գրական ամսաթերթ:

Վարանցավին մատնացույց արին Գ. Երիսթավի վրա: Այդպիսով հանձնեցին նրան ամսաթերթի խմբագրությունը և վրաց թատրոնի գերեկատոր նշանակեցին:

1852 թվին հիմք դրվեց վրացական առաջին «Յիս-

կաթի» ամսաթերթի: Ամսաթերթի խմբագիրն եր Հուրջն համախմբեց աշխատակիցների կադր իր բարեկամների միջից: Ամսաթերթին աշխատակցում եին՝ Պլատոն Խոսելիանին, վրաց ականավոր պատմաբան և փիլիսոփա՝ Ալ. Որբելիանին, Գր. Որբելիանին և ուրիշները: Այդտեղ Երիսթավին գետեղում եր իր վոտանավորները, պոյեմը, թարգմանությունները և հոգվածները: Նա շատ ու շատ ե թարգմանել: Բացի Միցկևիչից, թարգմանել ե նաև Վիկտոր Հյուգոյին, Պետրարկին, Շիլլերին, Բեռանթեյին, Պուշկինին և Լեոմոնտովին:

Նա ընտրում եր գլխավորապես այնպիսի վոտանավորներ, վորոնք համապատասխանում եին նրա հոգեկան դրուժյանը:

Այդ գործունեություն շրջանում նա իրեն առանձնապես վառ կերպով արտահայտեց «Սեղադարներ» պոյեմում, վոր գրված ե հասարակ վոճով և ուր, ի միջի այլոց, դիպչում ե աղնվական կենցաղին:

Սակայն Գ. Երիսթավի ինքնուրույնությունը կոմեդիաների մեջ ե: Այստեղ նա սկիզբ դրեց ռեալիստական թատրոնի և նրա պիեսները մինչև այժմ չեն իջնում վրացական բեմերից:

«Բաժանում» և «Վեճ» կոմեդիաներում Երիսթավին կենդանի գույներով նկարում ե այն ժամանակվա Թիֆլիսի կենցաղը: Տիպերը հաջող են վերցրած կյանքից և դրված են կենդանի ստեղծագործությունների մեջ:

Գլխավոր գործող անձինք—նոր տիպի աղնվականներ են, ռուսացած, սնանկ և թեթևասրտիկ:

Դրանք փչացնում են իրենց կյանքը և անձնատուր լինում ծուլություն ռա այլ մոլությունների:

Դա հեռացող աղնվական գասակարդն եր, սակայն դրա կողքին նկարագրված են ծնվող՝ մեծ մասամբ հայ բուրժուազիայի տիպերը: Զաղաքի առևտրականը դալիս ե փոխարինելու սնանկացած աղնվականությունը, նա զավթում ե բանկում դրավ դրված նրանց կավածքները և հետզհետե ամեն ինչ կենտրոնացնում ե իր ձեռքը:

կոմեդիաներում տրված են քայքայվող աղնվան տնտեսութեան, կուլտուրայի և ճորտատիրական կյանքի վառ պատկերները, ցուցադրված է առեփորական կապիտալի առաջացումն այն դրութիւններէ մեջ, վորտեղ գործում են կոմեդիաների գլխավոր հերոսները:

Ինտրիգները բարդ չեն, բայց գործող անձերի կենդանի լինելը գեղարվեստական արժեք է տալիս կոմեդիաներին:

Վրաց թատրոն գոյութիւն է ունեցել դեռ 18-րդ դարում, չեքալի թագաւորի որով:

Թարգմանվում էին ուսու և յեփրոպական հեղինակների վոդեբեզութիւնները:

Ալեքսանդր Որբելիանին գրեց մի վոդեբեզութիւն Դավիթ Վեքանորոզէի կյանքից: Գ. Երիսքավիմ առաջինը մտքեց կոմեդիան վրաց բեմը և դրանով հիմք դրեց ռեալիստական թատրոնի: Կոմեդիական թատրոնում նա նախորդներ չունեց, նրա գրական գործունեութեան ուղղութիւնը նույնիսկ չէր նախատեսում, վոր նա կբացի կոմեդիայի բոլորովին նոր արվեստը, թատրոնի նոյաւորը կլինի:

Նրա ճակատագիրը նման է Գրիբոյեդովին, վոր վոտանաւորների և պոյեմների մեջ շարունակում էր տրագիգիոն դրողներին և միայն կոմեդիայում նոր խոսք աւաց: Բացի այդ, հենց Գ. Երիսքավիմ է առաջին անգամ վրաց լեզուով թարգմանել «Խելքից պատուհասը» կոմեդիան:

Սակայն յերկար չշարունակվեց Գ. Երիսքավիի հասարակական, գրական և թատրոնական գործունեութիւնը:

Յերկու տարուց հետո փակվեց Ժուրնալը, վոր հետո ուրիշները վերսկսեցին: Թատրոնը նույնպես փակվեց իշխան Վարանցովի փոխադրվելու պատճառով, և Երիսքավիմ ստիպված յեղաւ թիֆլիսից անդափոխվելու իր տոհմական կալվածքը, ուր և շուտով վախճանվեց:

Նրա սկսած գործը գրավեց ուրիշ մասնակցողներին

և դա չէր կարող մարել. հատկապես շատ առաջ դնաց վրաց թատրոնը, վոր դեռ յերկար պահպանում էր երիսքավիան ռեալիզմի տրագիգիաները:

Երիսքավիմ հետագայում ունեցավ շատ հետեւորդներ: Գալքայված աղնվականի, Իմերեթցի խաբեբա և յիւնբաղ ծառայի, քաղաքի գծում ու ազա՛ վաճառականի տիպերը հետո յեւ զանազան վարիանտներով հանդես ելին դայիս մինչ հեղափոխական թատրոնում:

Երիսքավիի տրագիգիաները ժառանգող դրամատուրգներից առանձնապես աչքի բնկան Անտոնովը և Ավկսենտի Ցագարեիմ:

Վրացական ուսանողին ուներ ականավոր պոյետներ, բայց պրոզան աղքատ էր այն եպոխայում:

Այդ շրջանի յերկրորդական դրողների մեջ ամենից նկատելի դեմքը Գրիգոր ՌձեճՈՒԼԻՇՎԻԻՆ Ե (1819—1877): Նա մանր կալվածատեր աղնվականներից էր և միջնակարգ կրթութիւնն ստացել էր Թիֆլիսի դիմնագիւյում: Շուտով նա ծառայութեան մտաւ պետական գանձարանը: Հարկադրվեց բաւարարվել համեստ կյանքով: Մոտ մասնակցութիւն ունեցավ «Յիսկարի» ամսագրին, ուր պետեղեց մի շարք պատմվածքներ պատմական կյանքից: Դրանցից միջանիսն աղմկալի հաջողութիւն ունեցան, հատկապես «Թամարա թագուհին», վերջրած Վրաստանում մոնղոլական տիրապետութեան շրջանից:

Այդ պատմվածքը վոտանաւորի յեն վերածել Ռաֆայել Երիսքովը և Ժողովրդական պոյետ Սիմոն Գուգուցաւիան: Գուգուցաւիայի պոյեմն անսովոր հաջողութիւն ձեռք բերեց և միջանի հրատարակութիւն ունեցավ, մանավանդ դա տարածված էր Արեւմտայն Վրաստանում:

Դր Ռեմուլիշվիլու մի ուրիշ պատմվածքը «Անուկա թագուհին» դարձաւ պատմական բովանդակութեամբ, ավելի վարպետորեն և գրված, թեպետ սյուժեն փոխառված է:

Առավել չափով ինքնուրույն է նրա պատմական նո-

վելլան, «Այրի կիտրոնները», վորտեղ նկարագրված է Հեքալի արքայի թագավորութունը և արևմտական կենցաղը:

Իր պատմվածքներում Գր. Ռմեուլիշվիլին չի պաշտպանում պատմական ճշտությունը և ամենի հենվում է իր յերեվակայության վրա:

Այդ պատճառով ել դժվար է նրա գրվածքները պատմական կոչել:

Իր ժամանակ դրանք կարգում էին ուսմանտիկ արկածների սիրահարները:

Գր. Ռմեուլիշվիլու արձակը մի առանձին արժեք չունի: Այնտեղ հաջորդություն դառնում Գանիել ձոնֆաձեյի և Լավրենտի Արդաղիանիի պատմվածքները:

Նրանք գրականության մեջ ստեղծեցին նոր ժանր և ռեալիստական վեպի հիմքը դրին:

Գեորգի Երիսթավիից անմիջապես հետո վրաց դրականության մեջ յերևացին յերկու ռադիկալները—Գանիել ձոնֆաձեյ և Լավրենտի Արդաղիանի: Նրանք վեպի ստեղծման մեջ կատարեցին ռեալիստական նույն դերը, ինչ մոր Գեորգի Երիսթավի կոմեդիայի մեջ: Գանիել ձոնֆաձեյի «Սուրամի բերդը» վիպակը պատմական մեծ կարեւորություն ունեցող փաստ է: Այստեղ, առաջին անգամ «կայմասութա»-յից հետո, չոչափվում է ճորտատիրական խնդիրն իր ամբողջ ծավալով և անպաճույճ տեսքով:

ԳԱՆԻԵԼ ՁՈՆՖԱԶԵՅ (1830—1860) ծնվել է Դուլեթի գավառում մի աղքատ քահանայի ընտանիքում: Սովորել է սկզբում Վլադիկավկազի հոգեվոր դպրոցում, հետո ավարտել է հոգեվոր սեմինարիան և այնտեղ ել ուսուցիչ դարձել ռուսներն լեզվի, վորին կատարելապես տիրապետում էր:

Նա ստիպված է յեղել ծառայելու նաև վորպես չիւնովնիկ Սինոդի գրասենյակում և այդտեղ նա ռուսներենի յե թարգմանում մի ամբողջ շարք կրոնական գրքեր: Մանուկ հասակից Դ. ձոնֆաձեյ դիտում էր գյուղական

կյանքը, ինքն իր վրա յեր գրացել ճորտացած գյուղի արհավիրքները և իր դիտողություններն ու վորձն ոգտագործել է «Սուրամի բերդը» վիպակի մեջ:

Վիպակը խլացուցիչ հաջողություն ունեցավ, վորովհետև մերկացնում էր Փեռլալական կենցաղի սարսափները:

Գրականության մեջ կատաղի պայքար բարձրացրին նրա դեմ, և այդ գործում աչքի ընկավ Ա. Որբելիան:

Հավաքվեցին դատելու հեղինակին և դավադրություն կազմեցին, վորպեսզի նրան ցած նետեն Մուխրանյան կամրջից: Ծնորհիվ պատահականության նա ապաստվեց մահից, բայց այդ ժամանակ նա արդեն մեռած էր: Ողբերգիկությունների շրջանում բողոքի ձայներ լսվեցին և այդ բողոքը հասունանում էր որեցոր:

Հասունանում էր նաև դժգոհությունը ռեալիստական պահպանողականության և դեմոկրատիկ ուղղության մեջ:

Գանիել ձոնֆաձեյին վիճակված էր սկսել կռիվը և դառնալ դեմոկրատական տարրերի զորակիր:

«Սուրամի բերդը» վիպակը կառուցված է «Եկեղաններում»-ի ծրագրի համաձայն: Անչխիաթի վանքի մոտ, ավագների վրա հավաքվում են ջահել մարդիկ և դրուցում վրաց պատմության վորևե թեմայի չուրջը:

Մի յերեկո յել խոսք բացին Սուրամի բերդի մասին, և այդպիսով սկսվում է վիպակը. ըստ բովանդակության, Սուրամի բերդը քանդվել է միքանի անգամ, մինչև վոր նրա պատերի մեջ չթաղեցին կենդանի մարդուն:

Այդ յեղեկի ֆոնի վրա պատմվածքը չոչափում է ճորտատիրական վիճակը:

Կախարդ Վարդառան, վոր ապրում էր Թիֆլիսի Հավաքար թաղում, համոզում է արքայի մարդկանց, վորոնք անհանդատացել էին բերդի պատերի քանդվելու պատճառով, թե բերդի պատերի տակ պետք է թաղել վաճառական Դուրմիչխանի միակ վորդի Զուրաբին:

Զուրաբը մեռնում է տանջանքների մեջ, սակայն բերդը կառուցվում է:

Կախարդ Վարդուան Դուրմիշխանից վրեժ է լուծում անարատված սիրտ պատճառով, դրան զուգորթաց միասնում դարգանում է և այլ ինտրիգա, պատմվում է Ոսման-Աղայի արկածները:

Դուրմիշխանն հ. խառն Ծեփեթեու ապորինի վորդին է: Հայրը Դուրմիշխանին նվիրում է իր հուրը իշխան Մուխանանուն, վորին յերեխան դուր եր յեկել:

Ծախված տղան շատ բաներ է տեսնում իր նոր տիրոջ մոտ: Նա սիրահանվում է Վարդուայի հարձի վրան. նրանք պետք է ամուսնանային, բայց աղատ չեն:

Վարդուային հաջողվում է յերևուսի համար ել աղատելով՝ փրկանք տալ, և Դուրմիշխանը ճամբա յե ընկնում, վորպեսզի վորոշ միջոցներ ճարի հարսանիքի համար:

Այստեղ նա հանդիպում է Ոսման-Աղային, վորը պատմում է իր կյանքը և արկածները: Նա փախել է իր տիրոջից, յերբ մերթինս սպանել է նրա հորը, իսկ մորը լծել է տվել ձիաների տեղ սկզբում արտրին, հետո կալոցի ժամանակ գոմեշի փոխարեն կամը քաշելու:

Ստորափելի տանջանքների մեջ մայրը տվել է իր հոգին: Միքանի ժամանակից հետո չար կայսրածատերը ոգտվելով առաջին գիշերում իրավունքից՝ նրա հարսին զրկում է անմեղությունից:

Դա յցնում է համբերության բաժակը. նա սպանում է գաղանադած իշխանին, նրա կնոջը, վորդուն և փախչում դեպի Տաճկաստան:

Այստեղ նա հարուստ մահառական է դառնում, բայց ծերության հասակում անհանգստություն է գգում թրխտոնե տալան հավատք մուսուլմանականի փոխելու և իր տիրոջ անմեղ յերեխային ոտանետու պատճառով:

Առաջին նա պատահում է Դուրմիշխանին, վորդեհորում և նրան է հանձնում իր հարստությունը: Այնուհետև թուրքերն պայնում են դավաճան Ոսման-Աղային, և Դուրմիշխանն ահաբեկն հարստությամբ վերադառնում

է հայրենիք: Մական նոր դրությունը փոխում է նրա մտադրությունը. նա Ոսմանի առաջարկով ամուսնանում է մի ունեվոր դյուղացու աղջկա հետ և լիովնում Վարդուային:

Վարդուան վերափոխված իր զգացումների պատճառով, տեղափոխվում է Թիֆլիս, վառ պահելով իր վրեժ-խնդրությունը, վոր և նրան հաջողվում է:

Դուրմիշխանն ընկնված իր վորդու մահով՝ փրնտում է իր դժբախտության սկզբնապատճառ կախարդին, վորն ինքը բացում է ամեն ինչ: Հաջորդ ուր նրանց յերկուսին ել մեռած են դառնում:

Այդ լեգենդան ոգտադործել է Ա. Գրիբոյեդովը «Վրացական զիչեր» վորդերգության համար, ինչպես կարելի յե յեղբակացնել տպագրված հատվածից, և ինչպես վոր հաղորդում է Բուլգարինը Գրիբոյեդովի խոսքերից:

«Սուրամի բերդը» վիպակը շատ տարածված է վրաց ժողովրդական մասսաների մեջ և լույս է տեսել տասնյակ հրատարակություններով: Մարքսիստական քնննադատությունն այդ վիպակի աշխարհ դալու հետ է կապում վրաց դրականության գեմոկրատական դարաշրջանի սկիզբը:

Վիպակի լեզուն ժողովրդական է, վորձի միքանի անհարթությունները մոռացվում են զրվածքի անկեղծ տոնի և սյուժեյի բնական զարգացման շնորհիվ:

Տիպերը նկարագրված են ուելյեֆ և գունեղ. ուստի և վիպակը դուրի չե գեղարվեստական նշանակությունից:

ԼԱՎՐԵՆՏԻ ԱՐԴԱՋԻԱՆԻ (1818—1870) ռազմչինեց է, կրթությունն ստացել է Թիֆլիսի հոգեվոր սեմինարիայում: Նրա «Սուրմոն Մեմդամուաշվիլի» վեպն այսպես կոչված մեչչանական վեպի առաջին փորձն է:

Վեպի հերոսը Սուրմոն Մեմդամուաշվիլին, նորածագ բուրժուազիայի մի տիպ, հանդիսանում է վորպես նվաղած աղնականության փոխարինողը:

Վեպի մեջ տրվում է ազնվական Ռախնդաձե ընտանիքի քայքայումը:

Լուսաբաբ Ռախնդաձե՝ տոհմային ազնվականության ներկայացուցիչն ընկնում է իր նախկին ճորտի ճիւղանները, վորն իշխանի նվերած հինգ ռուբլուց ահագին հարստութուն է դիզում:

Մկեղով մանր առեվտրից՝ Սոլոմոն Մեծղամուռ-վիլին հետզհետե իր ձեռքն է առնում ամբողջ Դարթա-լիեհան և Կախեթիան:

Հավի և մրդի այդ առեվտրականը, չրջիկ չարչին, վաշխառության շորհիվ ստրկացրեց իր բարերար Ռախնդաձեյին, վորը խրվեց անվճարելի պարտքերի մեջ:

Սոլոմոն Մեծղանուաշվիլին զգալով իր ուժը՝ փոխում է կյանքի յեղանակը և ցանկանում է ասրել վաճառականի սին:

Նա պատրաստվում է իր աղջկան ամուսնացնել իշխան Ռախնդաձեյի հետ, սակայն գործը քանդվում է: Իշխանն այնուամենայնիվ դուրս է դալիս իր դրությունից՝ առանց ամուսնանալու Սոլոմոնի աղջկա հետ: Սոլոմոնը չի կարողանում տանել ամուսնության խանդարումը և մահանում է:

Վեպում շատ վառ կերպով նկարագրված է մանր առեվտրական դտասակարգի և չինովնիկության կենցաղը, միջանի տեսարաններ զարմանալիորեն պատկերում են քաղաքի խայտաբղետ բնակչության սովորությունները, սնապաշտությունը, բամբասանքը, կյանքի առողջան, նաև զարթոնող առեվտրական դասի ազահությունն ու դժժիւթյունը:

Վեպը գրված է ցատիքիկ տոնով. կան շատ սրամիտ դրություններ հյումորով համեմված:

Բայց հեղինակի տենդենցը թերություններ ունի, նրա համակրությունն ամբողջովին ազնվական Ռախնդաձեյի կողմն է, այդ հերոսի ազնվությունը և մեծահոգությունը նկարագրելու համար հեղինակը դույններ չի խնայում, իսկ Սոլոմոն Մեծղանուաշվիլու նկարագրի

մեջ խառնում է դույները, վորպեսզի ալելի վարտչակի գծվեն նրա պակասությունները:

Ձնայած հեղինակի տենդենցին՝ յեղրակացությունն ինքն իրեն է թղթում, վեպը չի կորցնում իր հետաքրքրությունն ու նշանակությունը, վորպես առաջին ոտման մեղչանական կյանքից, և Արդաղիանին մնում է նախաձյրը՝ դեղարվեստական ռեսիդի, վոր հետագա դրոյների մոտ ամում է փարթամորեն:

Ռոմանտիկ գիտակցության ճգնաժամը նախատես-նրված էր ճորտատիրության բնական տնտեսության և մինչ ռեֆորմային կենցաղի վողջ սխտեմի ճգնաժամով:

60-ական թվականներին արդեն հասունանում են դեպքեր, վորոնք կանխորոշում են տասնյակ տարիների դրական ու կուլտուրական փոխհարաբերությունները:

Այդ ժամանակ Պետերբուրգում կազմակերպվում է յերիտասարդների մի ուժեղ խմբակ՝ գլխավորությամբ Իլյա Չավմալաձեյի, վոր տալիս է իր «Հանսիբալի յերդում»-ը, կովել ճորտատիրական իրավունքի դեմ:

Այդ խմբակը բաղկացած էր բարձրագույն դպրոցների ուսանողներից, վորոնք կրթվել էյին ուսմ մեծ լուսավորիչների դադախարներով: Նրանք բուռն կերպով վողեվորվում են Բելինսկու, Հերցեմի, Չերնիշևիսկու ազատագրական մտքերով, և պատրաստ են դրանք կիրառելու իրենց հայրենիքում:

Յեթե ուս դեկարրիստների հեղափոխական մտքի առաջին շարժումն արձագանք գտավ Վրաստանում, ևս առաջիկ ուղեկտիվ պայմաններ պատրաստվեցին 60-ական թվականների գործիչների համար:

Այդ նոր շարժման գլուխ անցավ ԻԼՅԱ ՇԱՎՃԱՎԱ-ՁԵՆ, վոր մինչև կյանքի վերջը կարեվորագույն դեր խաղաց վրաց հասարակական մտքի պատմության մեջ և իր աղդեցությունը տարածեց ամբողջ XIX-րդ դարի վրա:

Առաջին պայքարը բռնկվեց դրական լեզվի չուրջը: Մի շատ ընդարձակ հոգվածով Իլյա Չավմալաձեյն

դուրս յեկա՛վ Հասարակական Հարաբերությունների
Հին ձեւերի դեմ և առաջադրեց նոր սերնդի սկզբունք-
ները:

Արխայիստներն ընդունեցին մարտահրավերը, և ըս-
կա՛վեց տաք վեճ. ճիշտ է, փիճաբանությունների առար-
կան գրական լեզուն և վոճի խնդիրն եր, բայց հետըղ-
հետե բոլոր հարցերն անցան ընդհանուր վիճելի թեմա-
ների շրջանը և պարզ վերջովեց յերկու սերունդների
«հայրերի և վորդիների» կռիվը:

Նոր սերնդի համարյա ամբողջ կադրը բաղկացած
եր ուսական համալսարաններն ավարտած ուսանող-
ներից, դրա համար արխայիստները նրանց անվանեցին
«Թերթդալուլի», այսինքն՝ Թերեքի ջուրը խմած մար-
դիկ: Այն ժամանակ Թերեքի և Դարյալի վրայով եր
անցնում Բուսաստանի ճանապարհը:

Իլյա Ճավնալաճեյի հետ բանակուիմն առաջինն ըս-
կընեց իշխանուհի վարվառա Զորջաճն, սակայն չու-
տով պարզվեց, վոր սխալաստիկ «կատեգորիաներով»
կրթված տնաբույս իշխանուհին անկարող եր դիմանա-
լու յերիտասարդ ռեֆորմատորների հախուռն գրոհին,
և նրան ողնության յեկան ավելի նշանավոր արխայիստ-
ներ:

Վերջինների գլուխն անցա՛վ պոյետ Գրիգոր Որբե-
լիանին, վոր այդ ժամանակ կրակոտ ուժանտիկ-դա-
վադիրից պահպանողական իշխանի յեր փոխվել:

Պատմության որչեխով ընթացքի հիման վրա կա-
րելի յեր յենթադրել, վոր հին սերունդը ոչտաք է անձ-
նատուր լինի: Այդպես ել յեղա՛վ, թեպետ արխայիստ-
ները դեռ յերկար ժամանակ իրենց հաղթված չեյին հա-
մարում:

Բնական է, վոր արխայիստներն անմիջապես սկսե-
ցին խոսել հայրենիքի առջե՛վ իրենց ունեցած ծառայու-
թյունների մասին և իրենց հակադրում եյին «անմո-
բուս և նստողիաստներին»:

Առաջին խրոխտ պամֆլետը վոտանավորով գրեց

Գրիգոր Որբելիանին. նա դիմում է նոր կեղծ ուսութա-
վելիներին՝ մեղադրելով նրանց բոլոր մահացու մեղ-
քերում—անասովածության, աղատամտության, տղի-
տության և ամենից ավելի՝ մայրենի լեզվին հայհոյե-
լու մեջ:

Հին սերունդը մեծ արժեք եր տալիս լեզվի հարցին.
նիկոլայան ռեժիմի շրջանում, նրանք սովորել եյին
լեզվի խնդրի վրա նայել, վորպես ազգային անկախու-
թյան հասարակական ատրիբուտի վրա:

Լեզվի ռեֆորմը նրանց սրբապղծություն եր թվում:

Որբելիանիի պամֆլետին պատասխանեց պոյետ
Ակակի Ծեքեքեյին—Իլյա Ճավնալաճեյի գործակիցը,
մեկը ջահել—«Թերթդալուլիներից»:

Պատասխանի մեջ շատ յերիտասարդական տաքար-
յունություն կար և վոչ մի հարգանք դեպի մեծերը:
Պոյետը ծաղրում է ծաղայությունները հայրերի, վո-
րոնք գրավել են Յերեվանի բերդը ուս գործերի հետ
միասին և դրանով պարծենում են զավակների առաջ, և
ընդհանրապես բոլոր կետերում անխնա խարազանում է
հայրերի չինովնիկական ինքնաբավականությունը և
կեղծ—հայրենասիրությունը:

Սակայն պայքարը վճռվում եր գրական մարտերի
դաշտերում և այստեղ գլխավոր դենքերը գրական
փաստերն եյին:

Նոր սերունդը լի յեր թարմ գաղափարներով, ստեղ-
ծագործական հղացումներով:

Լեզվի բարեփոխման խնդիրը նույնպես հասունա-
ցած եր, քանի վոր վրաց լեզուն Անտոն կաթողիկոսի
ժամանակվանից չեր վերանորոգվել, իսկ կաթողիկոսը
սխալաստիկ խլամով եր լցրել այն:

Իլյա Ճավնալաճեյի առաջին հոդվածը լույս տե-
սա՛վ «Յիսկարի» ամսագրում, բայց խմբագիրը չուտով
հասկացա՛վ իր ճակատագրական սխալը:

Իհարկե Իլյա Ճավնալաճեյն այլևս չի կարող հին
ամսագրի հյուրասիրության վրա հույս գնել և հոգս

տարավ ինքը հրատարակելու «Սաքարթվելոս Մոսկոն»
ամսագիրը:

Նա ամսագրի շուրջն համախմբեց իր յերիտասարդ
համախոհներին և այնտեղից որդ-որին ուղարկեց իր
եյին արխայիստների գիրքերը, մինչև վոր պարտվող-
ներն անհնաւորը յեղան:

Իսկապես, հենց այնտեղից ել սկսվում է վրաց
ժողովրդային պայքարի հիմքը, քանի վոր Վարպաճովի հիմ-
նած «Յիսկարի» ամսագիրը յերբեք չէր կարող հասարա-
կական մտքի արտահայտիչը դառնալ:

Հրատարակատեսական գործունեությունը հարակից
իլյա ձավաճանի դարի տվեց զեղարկատական ին-
տենսիվ աշխատանքի:

Այդ շրջանի նրա վոտանավորն ուժգին բողոք է տի-
րող հասարակական հարաբերությունների դեմ: Նա-
խորդ պոյետների ուսմանտիկ խոսելին նա հակադրում է
վերածնվող վրաստանի իդեալը. նրա նահապետական
լիրիկան լի-յե քաղաքացիական պափոսի ավյունով:
Առաջին անգամ նա բանաստեղծությունների և հետո
եւ արձակի մեջ սկսեց խոսել ճորտատիրական իրավուն-
քի մասին:

Այդ հարցում պոյետն իր յերկարատեղ կյանքի ըն-
թացքում շատ անգամ փոփոխություններ կրեց, բայց
իր գրական աշխատանքի արշալույսին նա ակտիվ կեր-
պով պրաղվեց ճորտատիրական իրավունքի ցավոտ
հարցով:

«Ավաղակ Կակոն» պոյեմայում հանդիպում են յեր-
կու ավաղակ և պատմում են իրենց արկածները: Նրանք
յերկուսն ել փախել են անողորմ կալվածատիրոջից:

Ավաղակ Զաքրոն պատմում է իր կյանքը, թե ինչ-
պես մանուկ հասակից նա ստիպված է յեղել աշխատել
ստրկության մեջ, տիրոջ համար, թե ինչպես ծերացել
է նրա հայրը և ինչդեհ տիրոջից թողնել վորոշուն ըն-
տանիքին ողնելու, սակայն չարասիրտ տերն այդ մա-
սին լսել անգամ չի ուղեցել և յերբ ծերունին կրկնել է
իր ինքիբը, նա չի բուխով ջարդել և նրա ատամները:

Ծերունին իր որում ծեծ չէր կերել, նա սկսում է
պաշտպանվել, և կալվածատերը կանչում է իր ծառա-
ներին, ու ծերունուն սոսկալի ծեծում են ճիպոտով:

Ծերունու ընկերներն ել կարծես ուրախացել են ա-
նարդելու նրան և այնպիսի շանսիրությունք են ծեծել,
վոր ծերունին տվել է իր հողին:

Զաքրոն տեսել է այդ ամբողջ գարշելիությունը,
նրա ներքին ճայնը հրում եր դեպի սպանություն, յերբ
նրա հայրը մահանում է, նա հրացանով զնդակահա-
րում է մարդասպանին և այժմ նրան մնում է միայն ան-
տառում պաշտպանել իր աղատությունը:

Նույնպիսի հեղափոխական թափով է գրված «Աչը-
դելի» («Ուրվական») պոյեմը. հիանալի հնչող վոտանա-
վորի մեջ տրվում է մարդու և քաղաքացու դեկլա-
րացիան. XIX-րդ դարին—աշխատանքի աղատագրո-
ղին—նվիրված ներբողը մինչև այժմ մնում է քաղաքա-
ցիական վոտանավորի գլուխ գործոցը, ինչպես նաև
նույն պոյեմի մյուս հատվածը, աղնվականի և ճորտի
դիալոգը:

Ճորտատիրական հարաբերություններին են նվիր-
ված նաև «Մա՛րդ և սա» և «Մուրացիկանի պատմածը»
պատմվածքները: Առաջինի մեջ նկարագրվում է գյու-
ղական կալվածատեր Լուարսաբ Տառկարիձեյի կյան-
քը:

Լուարսաբ Տառկարիձեյն ճորտատիրական իրավունքի
արդասիքն է, ծույլ, շատակեր, վոչ մի մարդկային հե-
տաքրքրությունը նրա ուղեղից ներս չի թափանցում,
այլև տնտեսությունը քայքայված է, տունը փլվում է,
ցանկապատը հանված, կառավարիչը հեշտությունք
թալանում է նրան:

Նրա կյանքի միակ նպատակը լավ ուտել և խմելն է:

Ամբողջ որերով ամուսինը կնոջ հետ քննում են հա-
ջորդ որվա ճաշացանկը և հաճախ վիճում են ճաշակի
մասին՝ ընկնելով ծիծաղելի դրուկյան մեջ: Նա անդա-

վախի և մեղսում, թեպետ ամեն տարի ընծաներով բեռնված զնում ե գուշակողների և վանքի արեղանների մոտ, վորպեսզի մի կերպ շարժի աստծու գուլթը և ժառանգի արժանանա:

Բայց վոչինչ չի ողնում. ամեն ոք նոր անախորժություններ են սպասվում: Պատմվածքի վերնադրի պատասխանն առանց ջանքի ինքն իրեն ե գալիս, — իհարկե, դա մարդ չե, դա մարդանման մի արարած ե, վոր կորցրել ե ամեն մի գիտակից վերաբերմունք դեպի կյանքը և դարձել անասուն:

Այդ սատիրան նորից փոթորիկ առաջ բերեց: Շատերը չեյին ուզում հանձնես Լուսարսաքի տեսնել վրացի աղնվականին, սակայն կյանքը մտածում եր այլ կերպ, այն, վեր չեյին տեսնում դասկարգային եղոյիզմով կուրացածները, հայտնի դարձավ բոլորին, յերբ այդ իրավակարգը փուլ յեկավ:

Ավելի սուր կերպով ե հարցը դրված «Մուրացկանի պատմածը» գրքում: Դա պատմությունն ե անողորմ աղնվականի և բարի ծառայի, վորոնք բաղխվում են սիրային հողի վրա: Կալվածատերը սովորում ե քաղաքում, նրա հետ ե իր ծառան, վոր նույնպես իր հերթին մի քահանայից բարոյական կրթություն ե ստանում:

Տիրոջը դուր ե դալիս ծառայի հարսնացուն, նրա ամբաստանությամբ ծառային ձերբակալում են: Տերը հափշտակում ե հարսնացույին ու շուտով թողնում:

Մառան փախչում ե աքսորից, վերադառնում հայրենիք, իմանալով ամեն ինչ, չի խնայում իր տիրոջը և վրեժ ե առնում:

Բայց նա ինքն ել անջատված եր հասարակությունից, և մեռնում ե աքսորում:

Ճորտատիրական իրավունքի վերացումից հետո գյուղացիության դրությունն առանձնապես չբարելավվեց. ունեթորմը կիսով չափ խաղ եր: Իլյա ճավնավաձեմն հետադայում անդրադառնում ե այդ խնդրին իր «Ոթարի այրին» վիպակում, բայց այդ ժամանակաշրջանում նա

այնքան ել հակամետ չեր խորացնելու սոցիալական արմատները, նա արդեն կանգնած եր դասակարգային հաշտեցման տեսակետի վրա:

Զնայած դրան՝ «Ոթարի այրին» դեղարվեստական բացառիկ արժեքի վիպակ ե: Իլյա ճավնավաձեմնի վարպետությունն այդ վիպակում կատարելության ե հասնում, բայց թե ինքը և թե մյուսները նրանից հետո անկարող յեղան տալ այդպիսի լրիվ գեղարվեստական յերկ:

Այդ վիպակի տիպերը մոռնում ենտալ են. առանձնապես հաջողված ե Ոթարի այրու, վորպես վրաց գեղջկուհու, պատկերը:

Դա աշխատանքի և հերոսության մարմնացումն ե, քարասիրտ մի կին, յերբ պաշտպանում ե իրեն, սակայն կարեկից, յերբ ուրիշները նրա ողնության կարիքն են զգում:

Այրու վորդին՝ Գիարգին իդեալիզացիայի յե յենթարկված, դասակարգային գիտակցությամբ ոժտված բատրակի փոխարեն, տրվում ե ոպերային Ռոմեո: Նույնպես իդեալիզացիայի յեն յենթարկված զղջացող աղնվականներ Արչիլը և նրա քույր Կեսարիան:

Անվերջ դատողություններն աղնվականության և գյուղացիության միջեվ կոտրված կամուրջի և նոր կամուրջ կառուցելու մասին — քիչ են համոզիչ և յերբեմն ձանձրալի յեն:

Այստեղ Իլյա ճավնավաձեմն կորցրեց կապն իրականության հետ, և թեպետ վիպակը հրաշալի յե գրված, նրա սոցիալիստական վողնաշարը փշրված ե և Ֆալսիֆիկացիայի յենթարկված:

Սկսելով արխայիստների ջախջախմամբ՝ Իլյա ճավնավաձեմն թեքվեց դեպի աջ և շուտով քննադատության արժանացավ նախ աջից, նարոդնիկներից, իսկ հետո դասիստների, սոցիալ-դեմոկրատների խմբակի կողմից:

Այդ ժամանակ նա արդեն կարողացել եր ահադին հեղինակություն ձեռք բերել:

ԱնՍկի ՄԵՐԵԹԵԼԻ (1840-1915): Այդ Եպիսկոպոս
հուշակալոր պոյետ Ակակի Մերեթ-Ելիմ ծնվել է Ֆեոդա-
լական հին ընտանիքում: Իր գեղարվեստական ինքնա-
կենսագրության մեջ նա նկարագրել է այն միջավայրը,
վորտեղ նա ծնվել ու մեծացել է: Բացի ավտոբիոգրա-
ֆիկ հետաքրքրութունից, այդ յերկը կարեվոր է 10-ա-
կան թվականների Ֆեոդալական Վրաստանի կենցաղին
ծանոթանալու տեսակետից և շատ ուշադրավ գրական
գոյությունների բնույթ է ստանում:

Վրաց Ֆեոդալների սովորության համաձայն՝ վոր-
դիները մինչև իննը տարեկան հասակը դաստիարակ-
վում էին գյուղացիների մոտ: Ակակի Մերեթ-Ելիմ
նույնպես տրված էր մի գյուղական ընտանիքում դաս-
տիարակելու: Պոյետը հետագայում խոստովանում
էր, վոր յեթե մինչև կյանքի վերջն իր մեջ կայուն էին
գեմոկրատիկ սկզբունքներն ու համամարդկային իդե-
ալները, հալա դրանով նա բացարձակապես պարտական
է տպավորութուններին իր վաղ մանկության, վոր
անցկացրել է հատարակ գյուղացու ընտանիքում:

Հետո պատմում է գլխավորապես աշակերտական տա-
րիների, Պետերբուրգի համալսարանական շրջանի մա-
թին, վոր նա վերջացրեց 60-ական թվականներին:
Պոյետը կենդանի գույներով վերարտադրում է եպի-
սկան և տալիս է իր ժամանակակիցների պատկերավոր
բնութագրերը:

Արտահայտության պարզությունը և ապրումների
անկեղծությունը, վոր ընդհանրապես Մերեթ-Ելիմ ստեղ-
ծագործության գլխավոր հատկանիշն է, այդ գրված-
քում հասցրված է կատարելության:

Ակակի Մերեթ-Ելիմ ծառայությունը վրաց գրակա-
նությանն այն է՝ վոր նա գրքի լեզուն հաղորդակից ա-
րավ ժողովրդականին, վերակառուցեց լեզվի համաձայ-
նությունը և յերաժշտական դարձրեց:

Մերեթ-Ելիմ յերգերն այնքան ժողովրդական են, վոր
յերբեմն նույնիսկ գրականության հմուտ պատմագիրն
անգամ կարող է նրանց չփոթել ժողովրդականի հետ:

Վոճի նորոգումը և ժողովրդական լինելն անգի-
տակցական փաստ էր Ակակի Մերեթ-Ելիմ համար, նա
յեռանդով մարտնչում էր լեզվի բարենորոգման համար,
գիտակցորեն կոչ էր անում վերադառնալ ժողովրդական
սկզբնական ակունքներին և ժողովրդի յերեվակայու-
թյան կենսատու գանձից վերցնել գեղարվեստական
պատկերները:

Հենց սկզբից Ակակի Մերեթ-Ելիմ հարեց յերիտա-
սարդ ռեֆորմիստների սերնդին և մինչև վերջն անհաշո-
մնաց արխայիստների դեմ մղված պայքարում:

Բայց նա մշտապես խուսափում էր կրոնական շփոթու-
թյան, հեռու յեր կանգնած և խառնվում էր պայքարին՝
հույս չունենալով գլխավորել շարժումը և գերադասե-
լով որ յեկտվ մնալ:

Գուցե դրանումն է նրա աննախընթաց ժողովրդա-
կանության պատճառը՝ վրաց հասարակության բոլոր
խավերում: Արդեն խորին ծերության հասակումն էլ նա
պահպանել էր պատանեկական խանդավառությունը և
անվերապահորեն հարում էր հասարակական մտքի ծայ-
րահեղ ձախ հոսանքներին: Պետական Դոմայի ընտ-
րությունների ժամանակ սոցիալ-դեմոկրատները պաշտ-
պանում էին նրա թեկնածությունը: Նրա հիսնամյա
հոբելյանը 1905 թվին վերածվեց մինչև այժմ Վրաստա-
նում չտեսնված համաժողովրդական հանդեսի, իսկ
մահը 1915 թվին համաժողովրդական կոկիծ պատճա-
ռեց:

Վրաստանի ամենախուլ դավաճներից բանվորներին
և գյուղացիներին պատվիրակություններ էին գա-
լիս Թիֆլիս՝ մասնակցելու ամենասիրելի պոյետի մե-
ծարանքին, իսկ ավելի ուշ՝ նաև նրա թաղմանը:

Դեպի Ակակիմ տաճած սերը վրաց ժողովրդական
մասսաներից անցել էր Անդրկովկասի բոլոր աղքերին,
Նրա հոբելյանը և թաղումն Անդրկովկասի առաջադի-
մական ուժերի դեմոնստրացիա յեր, վոր անցյալում
հասարակական ահաբեկի նշանակություն ուներ, քանի

վոր աղագային հակամարտութիւնը և շովինիստական ուզարը խեղդում եյին այդ ժողովրդներին:

Ակակի Ծերեքեյիմ գերազանցօրէն լիբիկ է: Բարաքաշվիլուց հետո նա լիբիկայի մեջ բացեց նոր հնարավորութիւններ. վոտանալորը դարձրեց կատարյալ և անսահման յերաժշտական:

Ժողովրդական տարրերի և դեմոկրատական իդեաների զուգորդութեամբ նա ընդարձակեց պոյեզիայի ազդեցութեան շրջանը և առաջին անգամ նրան հաղորդակից արավ ժողովրդական լայն մասսաները:

Մայրենի լեզվի դասադրքերն ու քրեստոմատիաները լիքն են Ակակի Ծերեքեյու ստեղծագործութիւններով. նա առաջինն սկսեց գրել մանկական վոտանավորներ, նրա թարգմանած կրիլաՎի առակները պետք է ինքնուրույն ստեղծագործութիւն հաշվել, այնքան որդանապետ նա փոխադրել և պատմաստել եր վրացական խոսքին:

Ակակի Ծերեքեյու առաջին լիբիկական վոտանավորներն անխուսափելիորեն կրում եյին պարսկական լիբիկայի ազդեցութեան հետքերը: Սակայն պահելով մուհամմադների չափն ու ձեւը՝ նա նորոգում է վոտանալորի բովանդակութիւնը և ակտիվ քաղաքական մտտիւնների վերածում. «Թաւո Չեմո»-ն «Ալմար-Ադմարի»-ն գրված են միհամբազի ձևով և հանդիսանում են աղղասիրական լիբիկայի գլուխ գործոցը:

Պարսկական արեւելյան սեկսուալիզմով հարուստ մտտիւններ կնոջը նա փոխարինեց հայրենիքով:

Մեծնափորձառու սխեմատիկն անգամ այդ վոտանալորի մեջ չի տարբերի, թե ո՛ր է վերջանում կինը և ո՛ր սկսվում հայրենիքը:

Աղղասիրական տարրերից դատ Ակակի Ծերեքեյիմ, վոչ առանց նեկրատիկ աղղեցութեան, վրաց դրականութեան մեջ առաջ քաշեց ակտիվ քաղաքական հարցերը և դրանք բանաստեղծութեան առարկա դարձրեց:

Այդ ուղղութեամբ Ակակի Ծերեքեյիմն հաջողվեց

ստեղծել միքանի գլուխ գործոցներ— «Ռորոցի յերդ», ուր նկարագրվում է մոր ասլուսները ճորտատիրական իրավունքի վերացումից հետո և «Մերդ հունձի ժամանակ», ուր տրված է հնձվորների աշխատանքի սլոոցներ:

Ակակի Ծերեքեյիմ վրաց պոյեզիայի մեջ առաջինը մտցրեց քաղաքական սատիրան: Նրա յուսմենալյան վոտանալորը ձաղկում է այն ժամանակվա հասարակութեան բոլոր արատները, նա չի խնայում նաև իր ժամանակակիցներին, խոսքով հեղափոխականներին:

Այդ սատիրաներում պոյետը ծաղրում է չինովնիկներին, բյուրոկրատներին, կաշառակերներին, հայրենիքի դավաճաններին, շողոքորթներին, ծախված լրագրողներին, կեղծ հասարակական գործիչներին, վրացուհու նոր տիպը, վոր վերցրել է յեվրոպեյիզմի արտաքին խափուսիկ փայլը, այլանդակում է մայրենի լեզուն, յերեսներին կրթում է ստորաքարչութեան և ծառայամատութեան վոգով, ծաղրում է կարիերայի մարդկանց, կործանված աղնիսականներին և գյուղացոց կործանողներին:

Այդ վոտանալորներում պոյետը հաճախ բուրձրանում է մինչև սոսոստութեան դադաթները, նրա խոսքն անսովոր արտահայտութիւն է դառնում և հիշում է ինչպես նարատ: Հատկապես այդ վոտանալորներն են նրան ժողովրդականութիւն ձեռք բերել: Յալգրամները և սատիրաներն այնքան վառ կերպով եյին արտահայտում իրականութիւնը, վոր առանց դժվարութեան թափանցում եյին ժողովրդի խորքերը և Ռուսթափելու վերամբարձ դիտակտիքական վոտանալորներին համահավասար առած եյին դառնում:

Ակակի Ծերեքեյիմ գրել է շատ, և յուրաքանչյուր առիթով: Հասարակական կյանքի բոլոր դեպքերը նրա ստեղծագործութեան որշեկտ եյին դառնում: Հաճախ վոտանալորով գրում եր սրամիտ ֆելյետոններ և այն ժամանակ լրագրների կամ ժուրնալներին համադրեցրեց ձեռքից ձեռք եյին խլվում:

Ակալի Ծերեթելու մասնակցութիւնը վորէն պարբերական որդանում ապահովում էր մեծ տիրած և հաջողութիւն, և նրա վոտանավորները տպագրութեւն միջանի որ անց յերգում էյին քաղաքում և դուռում, ինչպես Բերանժեյի վոտանավորները, վորին ի դեպ՝ նա շատ և հիմանալի թարգմանել է:

Բացի սատիրական վոտանավորներից և ֆելետոններից Ա. Ծերեթելին գրել է կոմեդիաներ, վորոնց մեջ նա շարունակել է Գիորգի Նրիսքալի աշխատանքը և ընդարձակել ռեալիստական թատրոնի բաղան: Այդ կոմեդիաները գրված են ժողովրդական կենդանի լեզվով, յերբեմն վոտանավորով: Առանձնապես հաջող են իմերեթիայի և Գորու դարաշուխալներին տիպերը:

Պատմական դրամաներում—«Թամարա Յրիբերի» («Նենգամիտ Թամարան») և «Պատարա Կախի»—Ակալի Ծերեթելին ցուցաբերում է մեծ հանութիւն վրաստանի պատմութեանը: Պիեսները յերկար ժամանակ լաղացված էյին ինչպես Թիֆլիսի, այնպես էլ դավառական բեմերում: Սյուժեյի բարդութիւնը, տիպերի բնութագրումը և գրելու վարպետութիւնը հիշեցնում են իտալական խրոնիկ Ստենդալին:

Նույնպիսի վարպետութեամբ և պատմական ճշմարտութեան պահպանութեամբ գրված են Ակալի Ծերեթելու պոյեմները «Տոնիկե Նրիսքալի», «Նաթելա», «Բազրատ Դիդի», «Վախթանգ Գորդալանի» և այլն:

Ամբողջ պատմական վրաստանն անցնում է պոյետի աղջկով: Նա վերցնում է ազգային կյանքի ամենագլխավոր մոմենտները—մոնղոլների, պարսիկների, արաբների, բյուզանդացիների արշավանքը: Նկարագրված են առանձին պատմական դեմքերի և ժողովրդական մասսայի հերոսութիւնը: Բացի պատմական նյութերից, Ծերեթելին պոյեմների մեջ է մտցրել ժողովրդական հավատալիքներն ու ավանդութիւնները: Այդ պոյեմներից հայտնի յան՝ «Սուրբ Գիորգի» և «Սուրբ Իլյա», կենցաղային պոյեմներից լավագոյնն է՝ «Դաստիարակ»:

Ակալի Ծերեթելին գրել է նաև արձակ: Բացի «Չմիք անանգադախտի» ինքնակենսագրութիւնից, նա ունի «Բաշի-Աչուկ» վիպակը, վոր գրված է նույնպես պատմական թեմայով, բայց վորի դերը վրաց դրականութեան մեջ նման է Պուշկինի «Կապիտանի աղջկի» վիպակին: Յերկը գրված է ժողովրդական լեզվով, նկարագրված են 17-րդ դարի պատմական վրաստանի կենցաղը և սովորութիւնները: Որքելիանի «Սարա սիակի» գրքից և «Կալմասութեան»-ից հետո, «Բաշի-Աչուկ»-ը ներկայացնում է ռեալիստական վիպի շրջանը, ինչպես Իլյա ձալմալաձեյի պրոդան: Ակալի Ծերեթելու պոյեղիայի ազդեցութիւնն ահադին է հետագա պոյետների վրա, նա ստեղծեց իր չկույն, սակայն հետեւորդները յերբեք չեյին հասնում ուսուցչի վարպետութեանը:

Ինչպես Անդրիայում դոյութիւն ուներ լճային չկույ, այնպես էլ վրաստանում առաջ յեկալ լեռների պոյետների չկույ:

Շկուլայի հիմնական կադմէ եր—Ռաֆայել Յերիսքով, Սանդրո Կազբեկ, Վաժա Փշալեյի:

Վրաց դրականութեան միջանի պատմաբանները այդ դարոցի հիմնադիրն են համարում Իլյա ձալմալաձեյին:

Նա իր «Ճանապարհորդի նամակներ» սկզբնական գրվածքում նկարագրում է կառքով Ռուսաստանից վրաստան կատարած ճանապարհորդութիւնը Դարիալի կիրճով, Ռադմավիրական ճանապարհով: Գրվածքում նա դուրս է բերում մի լեռնականի՝ պահպանելով նրա բարբառը:

Իլյա ձալմալաձեյին հաջողվել է կարճ դիալոգների մեջ պատկերել լեռնականի բնավորութիւնը, այնպես, վոր տիպը կարելի յե լրիվ համարել:

Լեռնականի խոսակցութիւնները վրաստանի ճանապարհորդի մասին, հետո զանազան վարիացիաներով կրթված է գրականութեան մեջ: Հենց այդ հանգամանքը

առիթ է տալիս իլյա Ճավնալաճեյիմ համարել լեռների պոյնտների շկոլայի հիմնադիրը:

Լեռների թեման, վոր եպիսկոպոսիկ եր իլյա Ճավնալաճեյի գրվածքներում, Յերիսքովի, Կազբեկի ու Վաժա Փշավելիի մոտ մի հիասքանչ նկարի յե վերածվում:

Նրանց հաջողվեց ամեն կողմից ցուցադրել լեռնա-կանների սովորություններն և հավատալիքները, ինչպես նաև նրանց պատմական ճակատադիրը:

ՌԱՓԱՅԵԼ ԵՐԻՍՔՈՎ (1824-1901) . Առաջին պոյնտը, վոր վերարտադրում է ժողովուրդի իսկական կյանքը իր ստեղծագործության սկզբում. նա ևս դավաճանեց ողմանտիկ դպրոցի տրադիցիաներին, նրա առաջին վոտանավորը յերգում է պարտեզի սոխակի սիրային տանջանքները:

Հետո յերկարամյա ծառայությունը հաշտարար դատավորի պաշտոնում նրան ընդհուպ մոտեցնում է ժողովուրդին:

Գյուղի նոր շերտավորումը հանձնին նրա գտնում է իր կենցաղագիրն:

Պոյետն անմիջապես փոխում է իր ուղղությունը և ցավատանջ ողմանտիկը դառնում է ակտիվ նարոդնիկ:

Ըստ տարիքի Յերիսքովը 60-ական թվականների գործիչների շարքին է պատկանում, իսկ վորպես պոյետ հասունացել է ավելի ուշ: Նրա լավագույն ստեղծագործությունները գրված են իր կյանքի վերջին տարիներում:

Այդ տեսակետից նա վորոշակի տարբերվում է վրաց մյուս գրողներից, վորոնց լավագույն յերկերն ստեղծագործության առաջին շրջանին են ընկնում:

Գծելով գյուղական կյանքի իդիլիկ պատկերներ՝ Ռ. Յերիսքովը թափանցում է նոր գյուղի տնտեսական հարաբերությունների եյության մեջ: Խարաղանում է վախճանողներին, ամենակալ կուլակներին, ինչպես նաև չինովնիկներին, կալվածատերերին, վորոնք հարստա-

հարում ու չահագործում են գյուղացու աշխատանքը:

Նրան հեշտությամբ հաջողվում է վոտանավորի մեջ տալ աշխատանքի պրոցեսը:

Նրա վոտանավորներից միջանիսն ապշեցուցիչ են կատարելության և պարզության կողմից: Այդ բոլոր վոտանավորները մտել են քրեստոմատիաների մեջ, դրանց վրա դաստիարակվել են սերունդներ:

Ակալի Ծերեքելուց հետո Ռաֆայել Յերիսքովիմ հաջողվեց գրել մի ամբողջ շարք մանկական բանաստեղծություններ, վորոնց մեջ նկարագրում է տարվա յեղանակների պատկերները, գյուղական տոները և մանկական խաղերը:

Բանաստեղծությունները գրված են պարզ ժողովրդական լեզվով և լի յեն կոնկրետ պատկերներով: Հենց այդ վոտանավորներն են հեղինակին ահագին ժողովրդականություն ձեռք բերել:

Ռ. Յերիսքովի լավագույն վոտանավորը հանդիսանում է «Սեփսուրի յերգը», վոր համարը է Ն. Խարաքավիու «Մերանի»-ին: Այդ վոտանավորը գնահատվում է վորպես նարոդնիկների հավատի սիմվոլ. այդտեղից է սկիզբն առնում այսպես կոչված լեռների պոյետների շկոլան:

Ռ. Յերիսքովի 50-ամյա հորեյանին այդ շկոլայի դեկլարացիան կարդաց Վաժա Փշավելիի կրտսեր յեղբայր Բաչանան հորեյարին նվիրված մի վոտանավորով:

«Սեփսուրի յերգ»-ում Ռ. Յերիսքովն արտահայտում է սերնդի ակնկալությունները. վոտանավորը կառուցված է վորպես որֆիյական հիմն հայրենիքին և լեռներին:

Ռ. Յերիսքովը վորձել է իր ուժը նաև դրամատուրգիայի մեջ: Նրա պիյեսներն այնքան ել թույլ չեն, բայց չեն կարող համեմատվել վոտանավորների հետ:

Գյուղական կյանքն ուղղմանսիրելու իր յերկարամյա փորձը Ռ. Յերիսքովն ոգտագործում եր աղբադրական և հրապարակախոսական նամակներում: Առա-

Չին անգամ նա ուսաներն լեզվով նկարագրեց լեռնական-
ների սովորութիւններն ու կենցաղը. այդ տեսակետից
արժեքավոր և նրա մոնոգրաֆիան «Սեփաութիւն»
մասին: Նա նկարագրել է նաև Խմբերթիւն, Մինդրե-
լիւն և Մվանթիւն:

Ռ. Յերիսքովի գրական արժանիքն է հանդիսանում
Սարա Սուլիսան Որբելիանի բառարանի խմբագրու-
թիւնը և հրատարակութիւնը. նաև բնագիտութիւն-
ների համար ինքնուրույն բառարանի կազմումը վրաց,
ռուսաց և լատին լեզուներով:

Վրաց գրականութեան մեջ բոլորովին առանձնակի
տեղ է գրավում Վաթա ՓՇԱՎԵԼԱՆ (1861-1915): Մի-
այն վերջերս վրաց գրականութեան մեջ հատուկեց
նրա խոշոր անունը: Նրա գաղափարների կանոնիդացիան
տեղի չունեցավ վերելքի գրական դպրոցի կապրիզի
չնորհիւ, այլ տարերայնորեն հասնելով մինչև ժողովրդ-
գական մասսաների խորքը:

19-րդ դարի վրաց բոլոր պոյետներից Վաթա Փշա-
վեան ամենաթողութեամբն է ու հասկանալին, բայց
դարձյալ չնորհիւ փշովական բարբառի (նա ինքը Փշա-
վեթիւայի, Վրաստանի լեռնային նահանգի ծնունդ է),
յերկար ժամանակ հերքում է ին նրա աղգային բնութիւնը:

Առաջին անգամ Վաթա Փշավեան գրականութեան
մեջ ուշադրութեան է արժանացել Իլյա Չավնավաճի
կողմից: Չավնավաճին, ինչպես Պուշկինն իր ժամանակ,
պոյետների կանոնիդատորն էր հանդիսանում:

Վաթա Փշավեայի, վորպես գրական խոշոր յերե-
վուցի հայտնվելը, միանգամից ապշեցրել էր Իլյա
Չավնավաճիին: Նա նրան Նիկո Բարաքաշվիլու կող-
քին էր դասում, վոր այն ժամանակ ամենաբարձր դոմքն
էր համարվում:

Ինքը Իլյա Չավնավաճին խոնարհեց իր դիկտատո-
րական դուրսը նոր հսկայի առջև և վերջ տվեց վրտա-
նավոր գրելուն:

Վաթա Փշավեայի ստեղծագործութեան զենեթին
հասած քաղաքականութիւնը չէր ծածկում գրականու-

թիւնը: Եթե Ակակի Ծերեթելին և Իլյա Չավնավա-
ճին վորպես ժողովրդի հոգևոր առաջնորդներ իրենց
անունով ներկայացնում էին իրենց դարը, այդ պատ-
կանում էր անցյալին:

Վաթա Փշավեայի որով վրաց հասարակական միտ-
քըն այնքան էր հասունացած, վոր հանդես էին յեկել
քաղաքական կուսակցութիւններ, վորոնցից ամեն մեկն
իրեն էր վերապահում յերկրը կառավարելու իրավուն-
քը:

90-ական թվականներին պոյետիան նախկին դերը
չէր խաղում:

Այդ սերնդի պողետիկ գաղափարները և ակտիւ
լոզունդներն ավելի արձակի մեջ էին տեղ դնում:

Ծնունդ է առնում նարոդնիկութիւնը, հետո մարք-
սիզմը:

Նարոդնիկական գաղափարներ և տրամադրութիւն-
ներ հանդիպում են Վաթա Փշավեայի գրվածքներում,
սակայն նրա յերգերի արմատները ժողովրդական ըս-
տեղծագործութիւնից են սկիզբն առնում:

Դո այնպիսի տպավորութիւն էր ստեղծում, վոր
իբր թէ Վաթա Փշավեան ժամանակից յետ է մնացել,
բայց նրա ստեղծագործութեան անալիզը հակառա-
կըն և ցուցադրում:

Քննադատութիւնը, վոր Վրաստանում չարունակ
յետ է մնացել, ի հարկէ, միանգամից չէր կարող հաս-
կանալ Վաթա Փշավեային վորպես գրական յերվույթ:
Քննադատները պատրաստի սխմաններ ու ֆորմուլա-
ներ ունէին, վորոնց մեջ դժվար էր տեղավորել պոյե-
տի ինքնատիւ քանքարը:

Ուստի նրան մեկ արխայիստ էին անվանում,
մեկ սիմփոլիստ:

Ի հարկէ իր ստեղծագործութեան զանազան կող-
մերով Վաթա Փշավեան չիման մեջ է մտնում ուժման-
տիզմի և սիմփոլիզմի հետ, սակայն վոչ մի հնարաւո-
րութիւն չկա ցուց տալու, վոր նա ամբողջութեամբ
վորեւ խմբակի յե պատկանում: Վաթա Փշավեային

Հասկանալու համար պետք է ուսումնասիրել լեռնա-
կանների եպոսը: Վաժա Փշավելան ամբողջությամբ այդ
ժողովրդական ակունքներից է բղխում:

Դեռ պոյետի կենդանի ժամանակ նրա գրական հա-
կառակորդները և վոչ բարեկամները զարմանում էին
նրա ահագին բեղմնավորության վրա, լեզենդներ էին
հնարում, իբր թե նա լեռներից խուրջիններով ժողովրդ-
դական բանաստեղծություններ է բերում և ցուցադ-
րում վորպես իրենը:

Միջանի դեպքերում նա դիտավորյալ կերպով
վերցնում է իր ժողովրդական հեքիաթը: Նրա պոյեմների
սյուժեն դիտմամբ փոխ է առնված ժողովրդական ա-
վանդություններից, բայց նա այդ նա այդ եր գիտակ-
ցորեն, դրանում է նրան ըմբռնելու զաղտնիքը:

Հիանալի արձակի և միջանի լիրիքական վոտանա-
վորների մեջ նա թողնում է փշավելների բարբառը, յեվ
այդ յերկերը չեն զիջում նրա սկզբի չրջանի լավագույն
ստեղծագործություններին:

Վաժա Փշավելայի վոտանավորը կոփված է և ամե-
նահարմարն է հերոսական եպոսի համար: Նա տալիս է
բառային եզրվիվալենտներ լեռնային գետերի վարարման,
աղմկահույզ հեղեղների, վազրի վաղքի, տաք կովի և
գենքերի ձայնի համար:

Նրա ներքին ալլիտերացիաներն ապշեցուցիչ են:

Դերմանացի գիտնական Արթուր Լեյստը՝ յերկար
տարիներ ուսումնասիրելով վրաց գրականությունը՝
ասում է, վոչ համաշխարհային պոյեզիայում չկա մի
պոյետ, վոչ այնպես արտահայտեր ու հասկանար լեռ-
ները, ինչպես Վաժա Փշավելան:

Ռուս-ավելիից հետո վրաց պոյեզիայում եպոսը չի
վերածնվել: Քաղաքականապես բաժան-բաժան լինելը,
բալավթիվ թշնամիների արշավանքը, կուլտուրական
ոջխանների տեղափոխումը խանգարում էին ժողովրդ-
դի, վորպես ամբողջության որդանական կազմակերպ-
մանը:

Այդ որյեկտիվ պայմաններն անցան նաև XIX-րդ
դարը: Վրաց համարյա բոլոր խոշոր պոյետները, ինչ-
պես որինակ՝ Ա. Ճավնավան, Ն. Բարաքավիլի, Գր.
Որբելիանին, Ակակի Ծերեթելին, Իլյա Ճավնավա-
նին փորձում էին վերակենդանացնել եպիկական պոյե-
մը, սակայն նրանց պակասում էր գլխավոր դրույթը՝
ժողովրդի որդանական կենցաղը:

Իլյա Ճավնավան և Ակակի Ծերեթելին փորձել են
պատմական անցյալի մեջ գտնել այդ դրույթը, նրանք
իրենց պոյեմների նյութը քաղում էին «Բարթիս
Ցխովորա» տարեգրից, վոչ իդեսայ՝ գրված է ինչպես
պոյեմ և գրական ստեղծագործության հազվագյուտ
դոկումենտ է: Ուղտեդիգ են նրանո պոեմները—«Տո-
նիկե Երիսթալի», «Նաքելա», «Մեծն Բագրատ»—Ա-
կակի Ծերեթելիի և «Մայր ու Վորդի», «Դիմիտրիյ ար-
քայի անձնագրությունը» — Իլյա Ճավնավանի:

Սակայն այդ բոլոր պոյեմները կրում են դարա-
չրջանի որդանական արատները:

Այդտեղ պաֆոսը փոխադրվում է գեպի անցյալը,
առարկաններն անմիջականորեն չեն տեսնվում և զգաց-
նել տալիս: Միայն Սանդրո Կադրեկն արձակի մեջ ստեղ-
ծեց եպիկական ումանը՝ ողտագործելով չամխլան
եպոսայան:

Եպիկական պոյեմի վերակենդանացումը վիճակ-
ված էր Վաժա Փշավելային:

Այն սարերում, ուր նա յեղել էր, դեռևս անձեռն-
մխելի պահպանվել էր Վրաստանի պատմական կյանքը,
և Վաժա Փշավելան կապվ հենց այդ սկզնական ակուն-
քին:

Իր պոյեմներում նա բացեց բոլորովին այլ աշխարհ
և ժողովրդական յերեվակայություն հերոսներով:

Այդ աշխարհն ամբողջովին բաղխումների մեջ է.
կյանքը պայքարում է աղաթի և տրադիցիաների դեմ և
զարգանում է դրաման: Այդ աշխարհը պահպանել է
խաչակիրների մորալի մնացորդները: Պատերազմը հա-

մարմնում ե միակ առաքինութիւնը, այստեղից ե քա-
ջութեան ե հերոսական գործերի գովքը:

Այդ ֆոնի վրա զարդանում ե վաժա փշալիւայի
եղիքական ստեղծագործութիւնը: Նրա պոյեմները նը-
ման չեն մեկը մյուսին, բայց կապված են հոգու միաս-
նական, խիստ մոտաժող, ինչպես լեռների շղթաներ:

Պոյետի յերևակայութիւնն այդտեղ աղատութիւն
ե գտնում, վոտանաւորը կարծես վաղում ե, նա ան-
ասնձ ե ե կրակոտ:

Գլխավոր պոյեմներն են՝ «Բախտրիոնի», «Ոձ ա-
տողը», «Գողգթուր ե Ապշինա», «Եթերի», «Ալուդա
ֆեթելաուրի»:

Վաժա փշալիւայիմ ամենից շատ հաջողութեմ են
լեռների ե կռիւների պատկերները: Նա կենդանացնում
ե բնութիւնը ե հաղորդում նրա թրթիւր:

Ահա ձեզ որինակները, — «լեռների մշուշը-դա լեռնե-
րի միտքն ե». «Արագված ծիծաղում ե». «Նա վարդար-
ված ե սիրով» ե այլն: Պանթելիստական պոյեզիան չի
կարող տալ մի պոյետի անուն, վոր ավելի լավ կարողա-
նա տալ մարդու ե բնութեան ներքին կապակցութեան
կրադործումը:

«Բախտրիոնի» պոյեմի նախընդհանր աշխատակետից
հնչում ե վորպես կոսմիքական հիմն:

«Վաժա փշալիւայի ստեղծագործութեան մեջ առան-
ձին տեղ ե գրավում արձակը: Բոլոր կասկածները,
պոյետի վարպետութեան մասին, չքանում են նրա ար-
ձակն ուսումնասիրելիս:

Այստեղ հաստատապես կարելի յե ասել, վոր նրա
գրելաձեւը ունի խառնակաւ ե:

Վոչ մի գալառական արտահայտութիւն, նրա լե-
զուն հիշեցնում ե խառնապահանջ կլասիկների լավա-
գուն գործերը: Գրավիչ պատմվածք «Գողգթի»-ն ակրա-
վում ե վորբայցած յեղնիկի մենախոսութեամբ: Այնպիսի
քնքշութեամբ ե տրված նրա կյանքի թրթիւր, վոր հա-

ղիվ թե վորեւե մեկը կարգաւոր աշխատմամբը՝
չարտասով:

Բնութեան յերեւոյթներն հասկանալու գաղտնիքն
այստեղ կատարելութեան ե հասցրած:

Վոչ մի ավելորդ տող, վոչ մի ավելորդ բառ: Սուր-
գենկայով մեղմացրած աշխատեմ հոսում ե անկանդ:

Արձակ բանաստեղծութիւնների ցիկլում հայտնի
յեն՝ «Մանուշակ», «Նապաստակ», «Լեռնային առվակ»,
«Արմատները», «Լեռների գագաթները», վորոնց մեջ
նկարագրվում ե կյանքի տրուիւր, ե վաժա փշալիւայն
զգում ե «Ցածում գտնվող ճյուղի ծլումը» ե «հրեշ-
տակների լեռնային թռիչքը»:

Այդ գրվածքները կարելի յե համեմատել Եդգար
Պոյի ոֆորտների, Բողբերի փոքրիկ պոյեմների ե Տուր-
գենեվի արձակ բանաստեղծութիւնների հետ, իսկ վրաց
գրականութեան մեջ կարելի յե համեմատել յեղզի յե-
րեմիկի ոֆորտիստ Սաբա Սուլիսան Ուրբիլիաճիի հետ,
(հեղինակ «Ստի Իմաստունը» գրքի, վորտեղ խոսքի
խնայողութիւնը մինչե ծայր աստիճանի յե հասցրած ե
ծածկագիր ե հիշեցնում):

Վաժա փշալիւայն քափանցում ե վոչ միայն բնու-
թեան գաղտնիքները, այլ ե նրա պատմվածքներում
կենդանանում ե նրա ժամանակակից փշալիւայն գյու-
ղը: Այստեղ պատկերանում են գյուղի մեծերը,
նրա տղրուկները ե ավերողները:

Միքանիսն աշխատում են ջրտինջը ճակատին
բայց կան թամբալներ ու աղահներ, վոր «Սրբապատ-
կերի մամերն են դողանում»: Նկարագրված ե գյուղի
բարի ուսուցիչը, շարունակ գյուղի մասին մտածող: Ում
հարկավոր ե մի բան գրել, տեղեկանալ վորեւե բանի
մասին — ուսուցիչը կգրի ու կտեղեկանա:

Հեղինակը գյուղի ջրտինջի ե պրիստովի հետ
հաշտ չե: Մի յերկու խոսքով տրվում ե ջրտինջի
պատկերը, վոչխարի յեր նման, յերբ բնորոշին: Բա-

վազան եր վզով մի խաչ կապել, յեւ վարդեն փոխվեց, ու պատմվում է նրա վատ դործերի մասին:

— «Յառնառով չիկներ, սրկաններ, յեթե ձեզ տեսնեմ, բոլորիդ կաշին կհանեմ, միայն իմ պետն առողջ լինի».—ասում է այդ հերոսը:

Այնուհետեւ նկարագրվում է թեթեւօտիկ իշխանը, վոր զբաղված է այն բանով, թե ում վրա հարկ դնի, ում ծեծի, ումնից մի բան պոկի կամ տուգանք դրել տա, և գյուղին իմաց տալու համար, վոր ինքը հեռանում է իր ամրոցից, կրակում է աստղերին:

Այդտեղ տրվում է նաև առևտրականի տիպը: Ինչպես գայլ շոքել է նա գյուղի բլին և քայքայում է միամիտ գյուղացիներին:

Այդ ոֆիսերները հետո մեծանում, դառնում են մեծ կոսպներ, և հնաժամ այն բանին, վոր Վաթա Փշավելան քիչ է դրել, նրա յերկերն ալելի յեն արտահայտում գյուղի կեպաղը, քան ուղղափառ նարոդնիկների ձրգձրգված տենդենցիոզ պատմվածքները:

